ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 12 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել 17-ը փետրվարի 2023թ. թիվ 2 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023-2027թ.թ. հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին,

3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, և 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին,

4.Եղեգիս համայնքի ավագանու 08/09/2022թ. թիվ 105Ա որոշման կից հավելվածի 11-րդ, 15-րդ կետերը և 15/07/2022թ. թիվ 93Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին,

5.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին,

6.Սալլի գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու, և Եղեգիս համայնքի ավագանու 08/09/2022թ. թիվ103Ա որոշման 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին,

7.Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշման կից հավելվածում լրացում կատարելու մասին,

8.Եղեգիս համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օր սահմանելու մասին:

Կողմ՝ 11 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Քրիստինա, բացակա
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԶՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 13 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027 Թ.Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023-2027թ.թ. հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 11 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Ջոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Քրիստինա, բացակա
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է՝ Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյանը

Հաստատվել է՝ Համայնքի ավագանու 17 փետրվար 2023թ.

2-րդ նստաշրջանի 1-ին հերթական նիստի թիվ 13Ն որոշմամբ

Հ. Եղեգիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ 5
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն 7
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը 29
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 45
3.1 Համայնքի զարգացման տեսլական 45
3.2 Համայնքի զբոսաշրջային ռեսուրսներն ու ներուժը 45
3.3 Համայնքի պարտադիր խնդիրները 49
3.4 Համայնքային հիմնախնդիրների սահմանում 50
3.5. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում 52
3.6 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 61
4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 64
4.1 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ 64
5.ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 71
5.1. Համայնքի աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ գործելու կառավարման համակարգ 71
5.2. Համայնքի աղետների ռիսկի նվազեցում 72
5.3. Արտակարգ իրավիճակների գործողությունների կազմակերպում 80
5.4. Համայնքի վերականգնման /վերակառուցման կազմակերպում 87
6. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ 88

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Եղեգիս համայնքի զարգացման ծրագիրը համայնքի նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է 2023-2027թթ համար, որը ենթադրում է համայնքի տնտեսական և սոցիալական զարգացում: Այն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-ի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Սույն ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի համայնքի ղեկավարի ուղջույնի խոսքը:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում ներկայացվում են համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի նկարագրությունը, վերլուծությունը:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համառոտ մոտեցումներ՝ ՀԶԾ-ի իրականացման, մշտադիտարկման (մոնիթորինգի), վերահսկման և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման, փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

ՀԶԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում են համայնքի աղետների ռիսկերի կառավարման վերաբերյալ տեղեկատվություն:

Ծրագրի մշակման գործընթացին մասնակցել են՝ համայնքապետարանի տուրիզմի և տնտեսական զարգացման պատասխանատուն, այլ աշխատակիցներ, հասարակության տարբեր ներկայացուցիչներ, ակտիվ քաղաքացիներ, ավագանու անդամներ, գյուղերի վարչական ղեկավարներ և այլն:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Եղեգիս համայնքի հարգելի՛ բնակիչներ.

Հայաստանի Հանրապետության Վայոց մարզի մարզի Եղեգիս համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի առանցքում համայնքային ռազմավարական ուղղությունների ուրվագծումն է, որոնց շնորհիվ որդեգրվելու է զարգացման մի նոր փուլ:

Ձեզ ենք ներկայացնում Եղեգիս համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 2017 թվականի հունիսի 19-ին կատարված փոփոխության արդյունքում է Եղեգիս համայնքը կազմավորվել: ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքը ստեղծվել է 16 Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Շատին, Հորս, Սալլի, Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Սնաժայռ, Կալասար, Գետիկվանք և Արատես գյուղերի միավորումից: Համայնքում 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 6327 բնակիչ, որից՝ 3057 իգական. 3270 արական: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ, պտուղ-բանջարեղենի արտադրությամբ, մեղվապահությամբ, զարգանում է փոքր բիզնեսը, հյուրատնային բիզնեսը: Չնայած այդ ամենին համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքում առկա են բոլոր նպաստավոր պայմանները զբոսաշրջությունը զարգացնելու համար: Բարենպաստ պայմանները կան համայնքում նոր, էկոլոգիապես մաքուր գյուղտնտեսական արտադրանք ստանալու համար:

Համայնքում առկա են մի շարք խնդիրներ: Համայնքի տնտեսական զարգացման, սոցիալական խնդիրների լուծմանն է միտված ներկայացվող 5-ամյա զարգացման ծրագիրը, առաջիկա տարիներին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը: Օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև պետական կառույցների, հիմնադրամների, գործարարների և մասնավոր հատվածի ներդրումները.

- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Պատմամշակութային արժեքների պահպանություն

- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Զբոսաշրջության զարգացում
- Մանկական խաղահրապարակների ստեղծում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծում
- Նոր աշխատատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Մանկապարտեզի կառուցում
- Համայնքապետարանի շենքի կառուցում
- Ավտոպարկի կառուցում
- Մշակույթի տների վերանորոգում և բարեկարգում
- Աղետների ռիսկերի նվազեցում
- Ապաստարանների բարեկարգում, կահավորում:

Եղեգիս համայնքը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային և գյուղատնտեսական հնարավորություններով աշխատատեղեր ապահովող կենտրոններից մեկը, ինչի համար նախադրյալներն արդեն իսկ ստեղծված են:

Համայնքը այժմ համագործակցում է մի շարք պետական ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջանակները և ներգրավվել նոր ծրագրեր՝ մասնավորապես, այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է ծրագրեր Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքը ընդգրկում է 479,634 ք/կմ տարածք: Եղեգիս համայնքը ծովի մակարդակից բարձր է 1640-1690մ:

Խոշորացված համայնքի կենտրոնը Շատին գյուղն է, համայնքում 01.07.2022թ. դրությամբ բնակվում են 6301 բնակիչներ՝ 3042 իգական և 3259 արական: տնտեսությունների թիվը՝ 1958: Իսկ 01.01.2023թ. դրությամբ բնակվում են 6327 բնակիչներ՝ 3057 իգական և 3270 արական, տնտեսությունների թիվը՝ 1953:

Համայնքի տարածքով են հոսում Եղեգիս և Աղնջաձոր գետակները, որոնք համարվում են Արփա գետի վտակները: Եղեգիս համայնքով է անցնում «Հերմոն-Ելփին» ոռոգման ջրագիծը, որի շնորհիվ հնարավոր է ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 300 հեկտար տարածք: Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ՝ շինարարական քար՝գրանիտ, տրավերտին:

Կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ: Իր բնական, աշխարհագրական դիրքով, պատմական ժառանգությամբ Եղեգիս համայնքը Հայաստանի ամենահարուստ համայնքն է և ունի զբոսաշրջության, ձիարշավի, էկոտուրիզմի, լեռնային հեծանվավազքի, վրանային ճամբարների, ձմեռային սպորտաձևերի համար լավագույն պայմաններ և հնարավորություններ:

ԱՂՆՋԱԶՈՐ ԳՅՈՒՂ



Աղնջաձոր գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 141կմ է, մարզկենտրոնից՝ 23կմ: Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1620 մ է:

Աղնջաձոր գյուղը գտնվում է պատմական Հայաստանի Սյունաց աշխարհի Վայոց ձոր գավառում, այն համարվում է Վայոց ձորի հյուսիսային դարպասը: Նախկինում գյուղը ունեցել է Ենգիչա, Դրունք, Աղքյանդ, Լեռնանցք անվանումները: Գյուղը վերանվանվել է Աղնջաձոր 1968 թվականին: Սահմանակից է Թառաթումբ, Քարագլուխ գյուղերին և Գեղարքունիքի մարզին:

Գյուղում է գտնվում Օրբելիների (Սելիմի) քարավանատունը, որը 1332 թվականի կառույց է, Հայաստանի միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության եզակի կառույցներից մեկը: Գյուղից երեք կիլոմետր դեպի հյուսիս՝ Սելիմից հոսող գետակի ձախ կողմի վրա կա մի կիսավեր քարավանատուն (Փոքր քարավանատուն), ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարում:

Աղնջաձորից 4 կմ հյուսիս գտնվում է Կապույտ (Սուլեմա) բերդի ավերակները (IV-XIV դարեր), որը դասվել է Սյունյաց երկրի նշանավոր և անառիկ բերդերի շարքին: Գյուղը հարուստ է խաչքարերով (IX-XIV դարեր) և կամուրջներով (XIII-XV դարեր, XVIII-XIX դարեր):

Աղնջաձոր գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 431 բնակիչ, որից՝ 202 իգական, 229 արական, տնտեսությունների թիվը՝ 118: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 438 բնակիչ, որից՝ 203 իգական, 235 արական, տնտեսությունների թիվը՝ 118:

ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂ



Վարդահովիտ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 152կմ է, մարզկենտրոնից՝ 34կմ, ծովի մակարդակից 2050 մ բարձրության վրա, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գյուղերի ցանկում: Գյուղի մեջ ընդգրկված են նաև Սևաժայռ և Գետիկվանք գյուղատեղիները:

Գյուղի վարչական տարածքից են սկիզբ առնում Եղեգիս գետի Սևաժայռ (Կարակայա) և Էլեգիս վտակները: Գյուղը գտնվելով անտառամերձ գոտում ունի շատ գեղեցիկ բնապատկեր: Գետիկվանքը նախկինում եղել է Գետիկ ամրոց, այժմ այնտեղ պահպանվել են Հին Գետիկ եկեղեցու (12-17-րդ դար) մասունքները և գերեզմանոցը:

Գյուղի վարչական տարածքում առկա է բնական տաք և թթու ջրերի ակունքներ:

Գյուղի բնակիչները, բնակլիմայական պայմաններից ելնելով, զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ: Գյուղի տարածքում գործում են ՓՀԷԿ-եր, որտեղ աշխատում են համայնքից մոտ 40-50 բնակիչներ:

Վարդահովիտ գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 251 բնակիչ, որից՝ 114 իգական, 137 արական, տնտեսությունների թիվը՝ 101: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 250 բնակիչ, որից՝ 113 իգական, 137 արական, տնտեսությունների թիվը՝ 101:

ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂ

Հերմոն գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 146կմ է, մարզկենտրոնից՝ 26կմ:

Գյուղը վերաբնակեցվել է 1988թ-ից, բնակիչները հիմնականում նախկին փախստականներ են եղել գաղթած Ադրբեջանից:

Հերմոնը հիմնականում ապահովված է խմելու ջրով, Հերմոնից է հոսում Եղեգիս գետի վտակները:

Գյուղի տարածքում են Հերմոն և Արատես վանքերը 13-րդ դարում կառուցված, համայնքի տարածքում գործում են 1 խանութ, 4 ՓՀԷԿ, «Սիրանուշ» ճամբարը և 1 հանգստյան տուն:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1750մ բարձրության վրա:

Հերմոն գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 207 բնակիչ, որից՝ 117 իգական. 90 արական, տնտեսությունների թիվը՝ 63: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 207 բնակիչ, որից՝ 112 իգական. 95 արական, տնտեսությունների թիվը՝ 62:

ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂ

Գողթանիկ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 151կմ է, մարզկենտրոնից՝ 30կմ, Եղեգիս գետի ձախ ափին՝ հյուսիսարևելյան մասում:

Գյուղը հյուսիսարևելքից սահմանակից է Կարմրաշեն գյուղին, հարավարևելքից սահմանակից է Վարդահովիտ գյուղին, իսկ հարավարևմուտքից սահմանակից է Հերմոն գյուղին:

Գյուղը նախկինում անվանվել է «Ղաբախլու» իսկ 90-ական թվականներից գյուղը վերանվանվել է «Գողթանիկ»: Գյուղը վերանվանվել է այն պատճառով, որ բնակչության 80%ը գաղթվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գողթան գավառի /Օրդուբադի շրջան/ տարածքից: Գյուղում կան մի քանի խաչքարեր և քանդված եկեղեցի:

Գյուղի վերևում բարձր գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղերին:

Գյուղը գտվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա:

Գողթանիկ գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 182 բնակիչ, որից՝ 85 իգական, 97 արական, տնտեսությունների թիվը՝ 67: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 180 բնակիչ, որից՝ 84 իգական, 96 արական, տնտեսությունների թիվը՝ 68:

ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂ



Եղեգիս գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 140կմ է, մարզկենտրոնից՝ 20կմ, Եղեգիս գետի աջ ափին հարավային մասում: Գյուղը հյուսիսարևելքից սահմանակից է Հերմոն գյուղին, հարավարևելքից Արտաբույնք գյուղին, իսկ հարավարևմուտքից սահմանակից է Շատին գյուղին: Գյուղը նախկինում կոչվել է «Ալայազ», իսկ 2000- ական թվականներից գյուղը վերանվանվել է «Եղեգիս»: Վերանվանվել է այն պատճառով, որովհետև գտնվում է պատմական Եղեգիս քաղաքի տարածքում: Գյուղը հարուստ է եկեղեցիներով ու խաչքարերով՝ Եղեգիսի հյուսիսարևմտյան մասում գտնվում են Եղեգիս բերդի ավերակները (Սմբատաբերդ, IX դար), արևելյան մասում՝ Սբ. Ստեփանոս (Զորաց) (XIII դար), արևմտյան մասում՝ Սբ. Աստվածածին (վերանորոգված 1703 թ.), հարավային մասում՝ Սբ. Նշան (Կարապետ) (XI-XIII դարեր) եկեղեցին, XI-XVI դարերի խաչքարեր:

Գյուղի վերևում բարձր գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղերին: Գյուղն ունի շատ գեղեցիկ աշխարհագրական դիրք, որը հնարավորություն է տալիս զարգացնել տուրիզմը:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1580մ բարձրության վրա:

Եղեգիս գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 389 բնակիչ, որից՝ 182 իգական, 207 արական, տնտեսությունների թիվը՝ 118: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 397 բնակիչ, որից՝ 187 իգական, 210 արական, տնտեսությունների թիվը՝ 119:

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԳՅՈՒՂ

Արտաբույնք գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 137կմ է, մարզկենտրոնից՝ 18կմ:

Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետի Էլեգիս վտակը:

Գյուղի արևելյան կողմում բարձրանում է հսկա լեռնային պատնեշը, որի վրա գտնվում է Սմբատաբերդ ամրոցը, որը կառուցվել է 12-րդ դարում: Բերդը կոչվել է Սյունյաց տան իշխան Սմբատի անունով: Սմբատաբերդից հյուսիս-արևմուտք գտնվում է Ցաղացքար եկեղեցական համալիրը / Եկեղեցին կառուցել է Բագրատունյաց թագավորության շրջանում 984-1029 թթ. կառավարման շրջանում: Կա շրջակայքում ևս 2 եկեղեցիներ ավելի վաղ թվագրությամբ: Գլխավոր եկեղեցին Սբ.Կարապետ եկեղեցին/:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650մ բարձրության վրա:

Արտաբույնք գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 1044 բնակիչ, որից՝ 510 իգական, 534 արական, տնտեսությունների թիվը՝ 355: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 1055 բնակիչ, որից՝ 519 իգական, 536 արական, տնտեսությունների թիվը՝ 357:

ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂ



Շատին գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 131կմ է, մարզկենտրոնից՝ 12կմ:

Գյուղն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում եմ համայնքում գտնվող վանքերն ու մատուռները: Գյուղի տարածքում են գտնվում երբեմնի Եղեգիս քաղաքի ավերակները, Աղվանք և Բազելիկ եկեղեցիները, Շատիվանք վանական համալիրը, Ավարայրի ճակատամարտից նահանջած հայրենասեր մարտիկների գերեզմանները, որոնք նահանջի ճանապարհին մարտի են բռնվել պարսիկների հետ: Այդ փաստն են վկայում Անգեղի, Սուրբ Աստվածածին և գյուղի այլ տարածքներում գտնվող մատուռները:

Վայոց ձորի մարզի նշանավոր հուշարձաններից է Շատիվանքը: Եղեգիս գետի և ժայռերի մեջտեղում է տեղակայված Շատին գյուղը: Շատիվանքը գտնվում է գյուղից մոտ 4 կմ արևելք, համանուն ձորակի աջ ափին, բարձրադիր գոգավորության մեջ:

Այն ունի գեղեցիկ դիրք: Արևելյան կողմից գյուղի վրա կախված են ժայռակազմ լեռների բազմայուն ճակատները: Գյուղի տարածքը ձգվում է Եղեգիս գետի երկայնքով, նրա երեք վտակների հատման տեղում:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գյուղի տարածքում կան հանքային հանածոներ, շինարարական քար՝ գրանիտ, տրավերտին: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1300-1350մ.:

Շատին գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 1797 բնակիչ, որից՝ 889 իգական, 908 արական, տնտեսությունների թիվը՝ 602: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 1081 բնակիչ, որից՝ 891 իգական, 910 արական, տնտեսությունների թիվը՝ 602:

ՀՈՐՍ ԳՅՈՒՂ

Հորս գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 139կմ է, մարզկենտրոնից՝ 20կմ:

Հորսում է գտնվում 13-րդ դարում կառուցված Չեսարի իշխանի առ անձնատունը, որը անվանում են «Չեսարի դարպասներ», իսկ Վարդենյանց լեռնանցքում գտնվող իջևանատունը եղել է նույն Չեսարի իշխանի քարավանատունը: Հորս գյուղում է գտնվում նաև իշխանական գերեզմանատունը:

Գյուղից 4կմ վերև 2016թ. Բեզուար ՎԲ ՀԿ միջոցներով կառուցվել է տուրիստական տուն, այժմ տուրիստներ են գալիս տարբեր երկրներից:

Հորս գյուղն ունի շատ տեսարժան վայրեր: Հորսի լիճը գտնվում է գյուղից 4կմ վերև, Բութ մատ կոչվող լեռնաշղթայի ստորոտում, որից անմիջապես հետո սկսվում է Հորսի անտառը:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվապահությամբ և գյուղատնտեսությամբ: Անասնապահության հիմնական ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է, իսկ գյուղատնտեսությանը՝ խաղողը, ընկույզը, պտուղը և բանջարեղենը: Գյուղը ծովի մակերևույթից բարձր է 1550մ, իսկ Գնդասար լեռը բարձր է 2900մ:

Հորս գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 253 բնակիչ, որից՝ 123 իգական, 130 արական, տնտեսությունների թիվը՝ 77: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 250 բնակիչ, որից՝ 118 իգական, 132 արական, տնտեսությունների թիվը՝ 75:

ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂ



Թառաթումբ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 142կմ է, մարզկենտրոնից՝ 23կմ, Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջերին:

Գյուղը սահմանակից է Հորս, Սալլի, Քարագլուխ, Աղնջաձոր գյուղերին, արևմուտքից սահմանակից է Գեղարքունիքի մարզին:

Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հիմնականում խնձոր և ընկույզ, կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ:

Թառաթումբում կան X-XII դարի խաչքարեր: Գյուղն ունի գործող եկեղեցի, որը կառուցվել է 1896 թվականին:

Գյուղը ծովի մակերևույթից բարձր է 1640մ:

Թառաթումբ գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 440 բնակիչ, որից՝ 195 իգական, 245 արական, տնտեսությունների թիվը՝ 140: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 432 բնակիչ, որից՝ 191 իգական, 241 արական, տնտեսությունների թիվը՝ 140:

ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂ



Քարագլուխ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 138կմ է, մարզկենտրոնից՝ 21կմ, զբաղեցնում է 22,7կմ քառ. տարածք: Գյուղը սահմանակից է Սալլի, Աղնջաձոր, Թառաթումբ գյուղերին և Գեղարքունիքի մարզին:

Գյուղի կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ ռելիեֆի և դրա բնակելի տարածքների համար արտահայտված են հետևյալ տիպերով՝ չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ և տաք ամառ, բարեխառն՝ երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով:

Գյուղում և շրջակայքում պահպանվել են 14-րդ դարի սբ. Աստվածածին փայտածածկ եկեղեցին, 12-13-րդ դարերի «Քարագլուխ» կամ «Շիկաքար» բերդը, որն ունի 12-րդ դարի երկու եկեղեցիներ, մեկը կանգուն է, մյուսը՝ փլված, 1253 թվականի թվագրությամբ տապանաքարով, 12-13-րդ դարերի մահարձաններով և 13-րդ դարի խաչքարերով հարուստ հին գերեզմանոցը, Հասան-Ջալալյան իշխանի 13-րդ դարի դղյակ-դիտարանը, աղբյուր-հուշարձանները: Քարագլուխ գյուղում է գտնվում Թուխ Մանուկ վանքը: Վանական համալիրի ավերակներն ու շուրջ բոլորը տարածված գերեզմանոցում պահպանված հուշարձանները (քառակող կոթող, խաչքարեր, տապանաքարեր) վկայում են, որ հնավայրը գոյություն է ունեցել առնվազն վաղ միջնադարից և իր նշանակությանը ծառայել մինչև շահաբասյան բռնագաղթը:

Քարագլուխ գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 785 բնակիչ, որից՝ 378 իգական, 407 արական, տնտեսությունների թիվը՝ 191: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 797 բնակիչ, որից՝ 385 իգական, 412 արական, տնտեսությունների թիվը՝ 190:

ՀՈՐԲԱՏԵՂ ԳՅՈՒՂ

Հորբատեղ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, մարզկենտրոնից հեռու է 21կմ, մայրաքաղաքից 141կմ:

Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում Վայոց ձորի մարզի մյուս գյուղերին: Գյուղը սահմանակից է Արտաբույնք, Եղեգիս, Սալլի գյուղերի հետ:

Գյուղը գտնվում է մարզկենտրոնից հյուսիս, Վարդենիսի լեռների հարավային փեշերին, Արտաբուն գետի ափին, այնտեղ է գտնվում «Հորբատեղի գեյզերը» այն բնական գազով ջուր է, որը բխում է գետնի տակից և շրջապատված է քարերով: Այն գրավել է տուրիստական կազմակերպությունների ուշադրությունը, որի շնորհիվ իրենց տուր. փաթեթներում ներառվել են նաև «Հորբատեղի գեյզեր» այցելությունը: Գեյզերի առկայությունը նպաստել է համայնքում զբոսաշրջիկների մեծաքանակ հոսքին:

Ծովի մակարդակից բարձր է 1880 մ:

Գյուղում է Հորբատեղ գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 255 բնակիչ, որից՝ 117 իգական, 138 արական, տնտեսությունների թիվը՝ 62: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 256 բնակիչ, որից՝ 118 իգական, 138 արական, տնտեսությունների թիվը՝ 55:

ՍԱԼԼԻ ԳՅՈՒՂ

Սալլի գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, ծովի մակարդակից 1600մ միջին բարձրության վրա: Հողատարածքները գտնվում են ծովի մակերևույթից 1400-2850մ սահմաններում:

Գյուղը մարզկենտրոնից հեռու է 15կմ, մայրաքաղաքից 137կմ:

Սալլի գյուղը գոյություն է ունեցել շատ հնուց: Այդ մասին կա հիշատակություն Ստեփան Օրբելյանի «Պատմություն Սիսական» գրքում, որում հիշատակվում է, որ Գրիգոր Լուսավորչի հանձնարարությամբ քարոզիչներ են ուղարկվում Հայաստանի տարբեր վայրեր, որոնք իրենց հետ վերցնում են սրբերի մասունքներ և քարոզում են քրիստոնեություն: Հիշատակվում է, որ նրանք իջևանում են Սալլի գյուղի տարածքում և այդ սրբերից մեկի՝ Սուրբ Մամասի մասունքները հանգրվանում են Սալլի գյուղում և այնտեղ կառուցվում է փոքր եկեղեցի, որը ներկա պահին ենթակա է վերակառուցման:

Սալլի գյուղում 01/07/2022թ. դրությամբ փաստացի հաշվառված են 267 բնակիչ, որից՝ 135 իգական, 132 արական, տնտեսությունների թիվը՝ 64: Իսկ 01/01/2023թ. դրությամբ փաստացի հաշվառված են 264 բնակիչ, որից՝ 136 իգական, 128 արական, տնտեսությունների թիվը՝ 66:

Եղեգիս համայնքի տնտեսությունների թիվը



Գծապատկեր 1. Մշտական տնային տնտեսություններ[1]



Գծապատկեր 2. Առկա տնային տնտեսություններ[2]

[1] Ստորև ներկայացված է Եղեգիս համայնքի մշտական տնային տնտեսությունների գծապատկերը 2022թ. դրությամբ տվյալների համապատասխան: Գծապատկերը հեղինակի կողմից:

[2] Ստորև ներկայացված է Եղեգիս համայնքի առկա տնային տնտեսությունների գծապատկերը 2022թ. դրությամբ տվյալների համապատասխան: Գծապատկերը հեղինակի կողմից:

Բնակչության տարիքային սանդղակը 2022թ.



Գծապատկեր 3. Բնակչության տարիքային սանդղակ[3]

Բնակչության բնական աճը 2018-2022թթ..



Գծապատկեր 4. Բնակչության տարիքային սանդղակ[4]

[3] Ստորև ներկայացված է Եղեգիս համայնքի բնակչության տարիքային սանդղակը 2022թ. տվյալներով: Գծապատկերը հեղինակի կողմից:

[4] Ստորև ներկայացված է Եղեգիս համայնքի բնակչության բնական աճը 2018-2022թթ..: Գծապատկերը հեղինակի կողմից:

Բնակչության բաշխումն սեռային խմբերի





Գծապատկեր 5. Բնակչության բաշխումն սեռային խմբերի[5]

[5] Եղեգիս համայնքի գյուղերի բնակչության բաշխումն սեռային խմբերի 2022-2023թթ. տվյալներով: Գծապատկերը հեղինակի կողմից:

Եղեգիս համայնքի գյուղատնտեսական ցուցանիշներ

Աղյուսակ 1.

Գյուղ	Գյուղատնտեսական նշանակության հողեր, հա	Ընդամենը չմշակվող հողեր, հա	Վարելահողեր, հա	Պտղատու այգիներ, հա	Խաղողի այգիներ, հա	Խոտհարքներ, հա	Արոտներ, հա
Աղնջաձոր	3169,25	0	149,75	17,52	0	175,9	1522,37
Արտաբույնք	3116,82	0	6,87	9,38	0	196,98	1685,45
Գողթանիկ	4759,88	3542,12	297,39	0	0	241,09	2693,89
Եղեգիս	2925,66	22	66,57	11,8	0	79,8	1351,51
Թառաթումբ	1984,41	261	40,57	0	0	166,08	1097,11
Հերմոն	4050,02	3870	137,51	8,27	0	226,35	3096,17
Հորբատեղ	1863,26	4,5	50,1	0,17	0	48,24	1380,87
Հորս	2945,28	632	273,97	9,14	6,6	236	604,9
Շատին	3483,61	0	305,08	6,09	4,15	37,55	539,25
Սալլի	1866,45	50,55	101,39	9,56	0	71,96	801,3
Վարդահովիտ	10630,22	90	226,9	0	0	341,41	9345,85
Քարագլուխ	2599,83	1353	305,4	0,6	0,2	55,38	736,81



Գծապատկեր 5. Եղեգիս համայնքի հողային ֆոնդը[6]

[6] Ստորև ներկայացված են Եղեգիս համայնքի հողային ֆոնդի բաշխումն ըստ բնակավայրերի: Գծապատկերը հեղինակի կողմից:

Աղյուսակ 2.

Գյուղ	Խոշոր եղջերավոր անասուններ	Ոչխարներ և այծեր	Խոզեր	Հավեր և/կամ այլ թռչուններ	Փեթակներ
Աղնջաձոր	400	267	24	510	507
Արտաբույնք	478	150	4	504	239
Գողթանիկ	227	55	0	200	313
Եղեգիս	250	513	3	395	238
Թառաթումբ	260	35	6	510	270
Հերմոն	141	36	6	233	347
Հորբատեղ	221	648	1	494	290
Հորս	354	181	0	700	1428
Շատին	1717	1000	81	4001	1784
Սալլի	208	254	7	547	72
Վարդահովիտ	267	900	41	503	265
Քարագլուխ	403	178	22	775	298



Գծապատկեր 6. Եղեգիս համայնքում առկա անասնագլխաքանակը[7]

[7] Ստորև ներկայացված են Եղեգիս համայնքի անասնագլխաքանակի տվյալները: Գծապատկերը հեղինակի կողմից:

2.2 Համայնքի գույքի կառավարում

Աղյուսակ 3. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների և հողերի գույքացուցակ

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն կամ ծածկագիրը	Զբաղեցրած տարածքը/ մակերեսը (մ²)	Վիճակի գնահատումը	Գույքի կառավարման գործառույթը	Այլ բնութագրիչներ
1	Վարչական շենք	Թառաթումբ 2փողոց շենք	200քմ	լավ	համայնքային	2011թ.
2	Մշակույթի տուն	Թառաթումբ 2փողոց շենք	170քմ	բավարար	համայնքային	2011թ.
3	Վարելահող	Թառաթումբ	48հա	Լավ	համայնքային	
4	Վարելահող	Թառաթումբ	13հա	Լավ	սեփականաշնորհված	
5	Խոտհարք	Թառաթումբ	16հա	Լավ	համայնքային	
6	Խոտհարք	Թառաթումբ	48հա	Լավ	սեփականաշնորհված	
7	Արոտավայր	Թառաթումբ	356հա	Լավ	համայնքային	
8	Այլ հողատեսքեր	Թառաթումբ	576հա	Լավ	համայնքային	
9	Բնակավայրի հողեր	Թառաթումբ	61հա	Լավ	սեփականաշնորհված	
10	Այլ բնույթի հողեր	Թառաթումբ	5.3հա	Լավ	համայնքային	
11	վարչական շենք	Աղնջաձոր 1փող1/1	316քմ	վատ	համայնքային	1969թ
12	վագոն տնակ	Աղնջաձոր 1փող1/1	33,3քմ	վատ	համայնքային	1998թ
13	մշակույթի տուն	Աղնջաձոր 3փող1/1	192,8քմ	լավ	համայնքային	1985
14	բնակելի տուն	7փող 1փկղ տ 9	133քմ	բավարար	համայնքային	1988թ
15	վարելահող	Աղնջաձոր	35,83հա	լավ	համայնքային	
16	վարելահող	Աղնջաձոր	113,92հա	լավ	սեփականաշնորհված	
17	բազմամյա տնկարկ	Աղնջաձոր	17,52հա	լավ	սեփականաշնորհված	
18	խոտհարք	Աղնջաձոր	17,86հա	լավ	համայնքային	
19	խոտհարք	Աղնջաձոր	158,04հա	լավ	սեփականաշնորհված	
20	արոտավայր	Աղնջաձոր	2,20հա	լավ	սեփականաշնորհված	
21	արոտավայր	Աղնջաձոր	1376,55հա	լավ	համայնքային	
22	այլ հողատեսքեր	Աղնջաձոր	1171,54հա	լավ	համայնքային	
23	այլ հողատեսքեր	Աղնջաձոր	8,60հա	լավ	սեփականաշնորհված	
24	բնակավայրի հողեր	Աղնջաձոր	42,89հա	լավ	սեփականաշնորհված	
25	արդյունաբերական հողեր	Աղնջաձոր	1,43հա	լավ	համայնքային	
26	հատուկ պահ.	Աղնջաձոր	1,03հա	լավ	համայնքային	

	տարացքներ					
27	հատուկ պահ. տարացքներ	Աղնջաձոր	14,01հա	լավ	պետական	
28	Վարչական շենք	Հերմոն Սիրանեսի փ 31	82,5քմ	բավարար	համայնքային	1972թ
29	ԳԱԶ-66	տր միջոց	2 նստատեղ	վատ	համայնքային	1970թ
30	վարելահող	Հերմոն	94,72հա	լավ	համայնքային	
31	վարելահող	Հերմոն	42,79հա	լավ	սեփականաշնորհված	
32	բազմամյա տնկարկ	Հերմոն	8,20հա	լավ	սեփականաշնորհված	
33	խոտհարք	Հերմոն	200,6հա	լավ	համայնքային	
34	խոտհարք	Հերմոն	25,75հա	լավ	սեփականաշնորհված	
35	արոտավայր	Հերմոն	13,76հա	լավ	սեփականաշնորհված	
36	արոտավայր	Հերմոն	3082,38հա	լավ	համայնքային	
37	Այլ հողատեսքեր	Հերմոն	2,02հա	լավ	սեփականաշնորհված	
38	Այլ հողատեսքեր	Հերմոն	579,8հա	լավ	համայնքային	
39	բնակավայրի հողեր	Հերմոն	25,81հա	լավ	սեփականաշնորհված	
40	բնակավայրի հողեր	Հերմոն	3,71հա	լավ	համայնքային	
41	այլ բնույթի հողեր	Հերմոն	22,79հա	լավ	համայնքային	
42	Վարչական շենք	Վարդահովիտ, փողոց 2, թիվ 5	96	բավարար	համայնքային	1954թ
43	Վարչական շենք /դպրոց/	Վարդահովիտ, փողոց 7, թիվ 4	400	բավարար	համայնքային	1974թ
44	Խանութի շենք	Վարդահովիտ, փողոց 2, թիվ 4	240	անբավարար	համայնքային	1971թ
45	Մշակույթի տուն	Վարդահովիտ, փողոց 8, թիվ 11 /1	300	լավ	համայնքային	1974թ
46	S A M E -603 /Հնդկական/	Տրակտոր		բավարար	համայնքային	
47	Վարելահող	Վարդահովիտ	66 հա	բավարար	համայնքային	
48	Վարելահող	Վարդահովիտ	160 հա	լավ	սեփականաշնորհված	
49	Խոտհարք	Վարդահովիտ	257,4 հա	լավ	համայնքային	
50	Խոտհարք	Վարդահովիտ	12 հա	լավ	սեփականաշնորհված	
51	Արոտավայր	Վարդահովիտ	135 հա	բավարար	սեփականաշնորհված	
52	Արոտավայր	Վարդահովիտ	2098,48	բավարար	համայնքային	
53	Բնակավայրի հողեր	Վարդահովիտ	39,5 հա	լավ	համայնքային	
54	այլ նշանակության հողեր	Վարդահովիտ	3,03հա	լավ	համայնքային	
55	այլ հողեր	Վարդահովիտ	24,24 հա	լավ	համայնքային	
56	Հատուկ պահպանվող	Վարդահովիտ	0,5 հա	լավ	համայնքային	

	տարածքների					
57	Այլ հողատեսքեր	Վարդահովիտ	716 հա	լավ	համայնքային	
58	Վարչական շենք	Եղեգիս,3փ. շենք.1	165 քմ	բավարար	համայնքաին	1980թ
59	Մշակույթի տուն	Եղեգիս,3.փ շենք.1	180քմ	բավարար	համայնքաին	1980թ
60	Մանկապարտեզ	Եղեգիս կենտ.2	66քմ	բավարար	դպրոցին	
61	Վազ 2121	Տր.միջոց	4.նստատեղ	վատ	համայնքաին	1985թ
62	վարելահող	Եղեգիս	68 հա	լավ	սեփականաշնորհված	
63	Այգի	Եղեգիս	11հա	լավ	սեփականաշնորհված	
64	խոտհարք	Եղեգիս	80հա	լավ	սեփականաշնորհված	
65	Արոտավայր	Եղեգիս	936հա	լավ	համայնքային	
66	Այլ բնույթի հողեր	Եղեգիս	20.3հա	լավ	համայնքային	
67	Վարելահող	Եղեգիս	0.6հա	լավ	սեփականաշնորհված	
68	Վարչական շենք	Քարագլուխ Փող.7 շենք 6	150ք/մ	վատ	համայնքային	1980թ
69	Մշակույթի տուն	Քարագլուխ Փող.3 շենք 6	364ք/մ	վատ	համայնքային	1953թ
70	Վարելահող	Քարագլուխ	306հա	վատ	սեփականաշնորված	
71	Խոտհարք	Քարագլուխ	55հա	լավ	համայնքային	
72	Արոտավայր	Քարագլուխ	401հա	լավ	համայնքային	
73	Այլ հողատարածքներ	Քարագլուխ	1353հա	լավ	համայնքային	
74	Բնակավայրի հողեր	Քարագլուխ	117,7հա	լավ	համայնքային	
75	Վարչական շենք	Հորս 2փ թիվ 4	574	բավարար	համայնքային	1973թ
76	վարելահող	Հորս	144,38	լավ	սեփականաշնորհված	
77	վարելահող	Հորս	129,59	լավ	համայնքային	
78	խոտհարք	Հորս	190,31	լավ	սեփականաշնորհված	
79	խոտհարք	Հորս	46,0	լավ	համայնքային	
80	արոտավայր	Հորս	604,65	լավ	համայնքային	
81	պտուղ	Հորս	9,14	լավ	Սեփական	
82	Վարչականշենք	Արտաբույնք 11 փ. 1փկղ.2 շենք	182 քմ	լավ	համայնքային	1984թ
83	Մշակույթի տուն	Արտաբույնք 1փ. 4 շենք	680 քմ	լավ	համայնքային	1962թ
84	Վարելահող	Արտաբույնք	1,40հա	Լավ	համայնքային	
85	Վարելահող	Արտաբույնք	5,47հա	Լավ	սեփականաշնորված	
86	Խոտհարք	Արտաբույնք	23,3հա	Լավ	համայնքային	
87	Խոտհարք	Արտաբույնք	173,95հա	Լավ	սեփականաշնորված	
88	Արոտավայր	Արտաբույնք	1135,16հա	Լավ	համայնքային	
89	Այլ հողատեսքեր	Արտաբույնք	977,22հա	Լավ	համայնքային	

90	Բնակավայրի հողեր	Արտաբույնք	82,79հա	Լավ	սեփականաշնորհված	
91	Այլ բնույթի հողեր	Արտաբույնք	218,27հա	Լավ	համայնքային	
92	Բնակավայրի հողեր	Արտաբույնք	34,98	լավ	համայնքային	
93	Վարչական շենք	Սալլի փողոց1,փակուղի1 ,թիվ4	140քմ	բավարար	համայնքային	
94	վարելահող	Սալլի	60,99հա	լավ	համայնքային	
95	վարելահող	Սալլի	43,80հա	լավ	սեփականաշնորհված	
96	Բազմանյա տնկարկներ	Սալլի	9,56հա	լավ	սեփականաշնորհված	
97	խոտհարք	Սալլի	59,36հա	լավ	սեփականաշնորհված	
98	խոտհարք	Սալլի	12,60	լավ	համայնքային	
99	արոտավայր	Սալլի	1,40հա	լավ	սեփականաշնորհված	
100	Արոտավայր	Սալլի	601,9հա	լավ	համայնքային	
101	արոտավայր	Սալլի	198,00հա	լավ	պետական	
102	Այլ հողատեսք	Սալլի	846,58հա	լավ	համայնքային	
103	Այլ հողատեսք	Սալլի	34,46հա	լավ	պետական	
104	Բնակավայրի հողեր	Սալլի	30,41հա	լավ	սեփականաշնորհված	
105	Այլ բնույթի հողեր	Սալլի	18,81հա	լավ	համայնքային	
106	Վարչական շենք	Կենտրոնական 16	140քմ	բավարար	համայնքային	1979
107	Մշակույթի տուն	Կենտրոնական 16	140քմ	բավարար	համայնքային	1979
108	Վարելահող	Հորբատեղ	8հա	լավ	համայնքային	
109	Վարելահող	Հորբատեղ	41հա	լավ	սեփականաշնորհված	
110	Բազմամյա տնկարկներ	Հորբատեղ	1հա	լավ	սեփականաշնորհված	
111	Խոտհարք	Հորբատեղ	12հա	լավ	համանքային	
112	Խոտհարք	Հորբատեղ	36հա	լավ	սեփականաշնորհված	
113	Արոտավայր	Հորբատեղ	610հա	լավ	համայնքային	
114	Այլ հողատեսքեր	Հորբատեղ	161հա	լավ	համայնքային	
115	Բնակավայրի հողեր	Հորբատեղ	36հա	լավ	սեփականաշնորհված	
116	Բնակավայրի հողեր	Հորբատեղ	13.1հա	լավ	համայնքային	
117	Վարչական շենք	Փողոց 1 շենք 1	120մք	վատ	համայնքային	1965թ
118	Մշակույթի տուն	Փողոց 1 շենք1	120մք	վատ	համայնքային	1965թ
119	Վարելահող	Շատին	305.08հա	լավ	սեփականաշնորհված	
120	Բազմամյա տնկարկներ	Շատին	1.94հա	լավ	սեփականաշնորհված	
121	Խոտհարք	Շատին	-	լավ	համանքային	
122	Արոտավայր	Շատին	293.88հա	լավ	համայնքային	
123	Այլ հողատեսքեր	Շատին	2596.6հա	լավ	համայնքային	
124	Բնակավայրի հողեր	Շատին	52.0հա	լավ	սեփականաշնորհված	
125	Այլ բնույթի հողեր	Շատին	4.15հա	լավ	համայնքային	

126	Վարչականշենք	Գողթանիկ 4-րդ փ շենք 2	299.6 քմ	լավ	համայնքային	1970թ.
127	Մշակույթիտուն	Գողթանիկ 4-րդ փ շենք 2	903.78 քմ	բավարար	համայնքային	1970թ.
128	Մանկապարտեզի շենք	Գողթանիկ 4-րդ փ շենք 2		լավ	համայնքային	1970թ.
129	Վարելահող	Գողթանիկ	297.39 հա	լավ	համայնքային	
130	Վարելահող	Գողթանիկ	166.60 հա	լավ	սեփականաշնորհված	
131	Խոտհարք	Գողթանիկ	240.59 հա	լավ	համայնքային	
132	Արոտավայր	Գողթանիկ	5.01հա	լավ	սեփականաշնորհված	
133	Արոտավայր	Գողթանիկ	419.32 հա	լավ	համայնքային	
134	Այլ հողատեսքեր	Գողթանիկ	1324.67հա	լավ	համայնքային	
135	Բնակավայրի հողեր	Գողթանիկ	37.75 հա	լավ	սեփականաշնորհված	
136	Այլ բնույթի հողեր	Գողթանիկ	6.84 հա	լավ	համայնքային	
137	Վազ 2121	Տր.միջոց	4.նստատեղ	վատ	համայնքաին	

12 գյուղերի ամբողջական գույքացուցակը՝ տես.
https://yeghegis.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=90f52d10-ae99-4122-a02a-88e5dd185749

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքում իրականացվող ծրագրերի նպատակն է համայնքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը՝ հաշվի առնելով բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ որպես հետևանք երաշխավորելով բնակիչների կյանքի որակի էական բարելավումը:

1. Եղեգիս համայնքի բոլոր գյուղերում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության զարգացմանն ուղղված տարբեր ծրագրեր՝ անասնախմոցների, փարախների, մակատեղերի, հովվի տնակների կառուցում:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմադրամի և Եղեգիսի համայնքապետարանի կողմից նախատեսվում է իրականացնել խոշորացված համայնքի զարգացման ծրագիր, որը կնպաստի համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը:

Այն իր մեջ ներառում է՝

- Մեքենատրակտորային պարկի վերազինում
- Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում

Ծրագիրը հնարավորություն կտա կրճատել համայնքային սեփականություն հանդիսացող շենք շինությունների, արտաքին լուսավորության ցանցի էլ. էներգիայի ծախսը:

3. ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացնել մի շարք տնտեսական և սոցիալական ոլորտի ծրագրեր, մասնավորապես՝

- Ճանապարհաշինություն
- Համայնքապետարանի շենքի կառուցում
- Արտաքին լուսավորության ցանցի կառուցում
- Այլընտրանքային էներգիայի կիրառություն
- Ոռոգման ցանցերի վերանորոգում և կառուցում
- Աղետների ռիսկերի նվազեցում
- Նախադպրոցական կրթական հաստատությունների կառուցում
- Համայնքի համար անհրաժեշտ կոմունալ և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում, համալրում

4. Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրերը

- Խաղահրապարակների կառուցում և վերանորոգում
- Եկեղեցիների վերանորոգում

5. Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրերը, ներդրումները և միջոցառումները:

6. Հասարակական կազմակերպությունների կողմից նախաձեռնվող միջոցառումներ/ կրթական ծրագրեր, start up-երի ֆինանսավորում և այլն:

2.4 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Աղյուսակ 4. Եղեգիս համայնք

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
Բնական մրցակցային առավելություններ	
• Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ • Համայնքում գործող փոքր բիզնեսներ • Ջրային ռեսուրսների առկայություն • Մաքուր բնություն • Մեղմ, տաք կլիմա • Միջպետական մայրուղին • Բնական և պատմական բազմաթիվ հուշարձաններ • Գյուղատնտեսական նշանակության մեծաքանակ հողերի առկայություն • Ինքնահոս ոռոգում • Բազմազան բույսերի և դեղաբույսերի առկայություն	• Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին • Զբաղվածության խնդիր • Արտագաղթի բարձր մակարդակ • Հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի վատ վիճակ • Համայնքապետարանի շենքի կառուցման անհրաժեշտություն • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Աղքատության բարձր շեմ • Բնակչության ցածր կենսամակարդակ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայություն • Ժամանցի սահմանափակ հնարավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայութուն • Մշակութային շինությունների բացակայություն և ոչ բարվոք վիճակ: • Գազաֆիկացման բացակայություն • Համայնքում վթարային շենքերի առկայություն: • Մեծաքանակ թվով ՀԷԿ-երի առկայություն
Մասնագիտական, մարդկային մրցակցային առավելություններ	
• Տեխնոլոգներ • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ	

• Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Տուրիզմի բարձրորակ մասնագետներ • Գյուղատնտեսներ	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծություն • Անասնապահություն • Այգեգործության • Բանջարաբոստանային այգիների համար նպաստավոր պայմաններ • Համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր • ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ • Համագործակցության շրջանակների ընդլայնում • Միջազգային և տեղական կազմակերպությունների աջակցություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն • Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում • Արտակարգ իրավիճակներ • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Համայնքապետարանի շենքի բացակայություն • Ժամանցի հնարավորության բացակայություն

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղի աշխարհագրական դիրք • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ • Պատմամշակութային արժեքներ / Եկեղեցի Ս. Նշան, Եկեղեցի Ս. Ստեփանոս (Ջորաց Եկեղեցի), Եկեղեցի Ս. Կարապետ, Հրեական գերեզմաններ, խաչքարեր և այլն/ Գյուղում գործող փոքր բիզնեսներ / Ընդհանուր քանակը 4, որից 1-ը հյուրանոց 3-ը հյուրատուն՝ • Arevi Hotel • The River House Yeghegis • Elegis Village Resort • Anahit Guest House	• Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների սակավություն • Մանկապարտեզի բացակայություն • Դպրոցի կառուցման աշխատանքների երկարաձգում • Խաղահրապարակների և զբոսայգիների բացակայություն • Մշակութային կյանքի բացակայություն • Գործող գրադարանի բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործություն • Անասնապահություն • Տուրիստական կենտրոնների ստեղծում • Զբոսայգիների և խաղահրապարակների ստեղծում • Դպրոցի կառուցման աշխատանքների ավարտում և շահագործում • Գրադարանի ստեղծում /համայնքի ենթակայության գրքերը ի պահ տալ դպրոցին/	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Արտակարգ իրավիճակներ

ՈՒԺԵՂ	ԹՈՒՑԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Պատմամշակութային արժեքներ / Վանական Համալիր Ցաղաց Քար, Ամրոց Սմբատաբերդ, խաչքարեր և այլ եկեղեցիներ/ • Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ • գյուղում գործող փոքր բիզնեսներ • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի առկայություն • Խաղահրապարակի և ֆուտբոլի դաշտի առկայություն	• Մասնակի գիշերային լուսավորության խնդիր • Փողոցների ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների սակավություն • Ուղեղների արտահոսք • Մանկապարտեզի բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն • Անասնապահություն • Հողագործություն • Ագրո և էկո տուրիզմ • Վերանորոգված մշակույթի տուն /մշակութային կյանքի ակտիվացում/ • Միջին և մանր բիզնեսների ստեղծում	• Գործազրկության միջին մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Կլիմայի փոփոխություն /քամիների հետևանքով ավերածություններ/ • Արտակարգ իրավիճակներ

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Գյուղում գործող փոքր բիզնեսներ • Մաքուր բնություն • Տեխնոլոգիաներ • Գյուղատնտեսական տեխնիկա-սարքավորում • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Ջրային ռեսուրսների առկայություն • Պատմամշակութային արժեքներ / Շատինի Վանք, Եկեղեցի Ս. Սիոն խաչքարեր և այլ եկեղեցիներ/: • Բեզոարյան այծերին և արջերին դիտելու դիտարան	• Արտագաղթի բարձր մակարդակ • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Համայնքապետարանի շենքի բացակայություն • Գործազրկության բարձր մակարդակ • Աղքատության բարձր շեմ • Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Ժամանցի հնարավորության բացակայություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայություն • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների սակավություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Գյուղատնտեսության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն • Անասնապահություն • Այգեգործություն • Գյուղատնտեսական հողերի առկայություն • Մանակապարտեզի կառուցում • Դպրոցի վերանորոգում	• Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Արտակարգ իրավիճակներ

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Պտղատու մեծաքանակ այգիներ • Վերանորոգված մշակույթի տուն • Ջրային ռեսուրսների առկայություն / Հորբատեղի բնական գեյզեր/ • Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ • Պատմամշակութային արժեքներ / Եկեղեցի Ս. Հրեշտակապետաց, խաչքարեր և այլն/ • Համայնքում գործող փոքր բիզնեսներ /հյուրատներ, նոր ստեղծվող գինու գործարաններ/	• Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս • Երթուղային տրանսպորտի բացակայություն • Աշխատատեղերի բացակայություն Միջին և մանր բիզնեսների բացակայություն • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Սահմանափակ հասանելիություն • Գերարագ ինտերնետի բացակայություն • Դպրոցը ապահովում է միայն հիմնական կրթություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն • Անասնապահություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Կլիմայի փոփոխություն • Արտակարգ իրավիճակներ • Արտագաղթի մեծ մակարդակ

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղի աշխարհագրական դիրքը • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Զարգացած այգեգործություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Պատմամշակութային արժեքներ / Հերմոնի Վանքը (Կնեվանք) Վանական Համալիր. Արատեսի Վանքը, խաչքարեր և այլն/ • Համայնքում գործող փոքր բիզնեսներ / Ընդհանուր քանակը 2, որից 1ը հյուրանոց 1-ը հյուրատուն Hermonatun, Lucytour Hotel / • Սիրանոյշ Ճամբար	• Գիշերային լուսավորության ոչ ամբողջականություն • Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների սակավություն • Դպրոցը ապահովում է միայն հիմնական կրթություն: • Կրթական միջին մակարդակ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն • Անասնապահություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Կլիմայի փոփոխություն • Արտակարգ իրավիճակներ • Արտագաղթի մեծ մակարդակ

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Աշխարհագրական դիրք • Զարգացած այգեգործություն • Ջրային ռեսուրսների առկայություն	• Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս • Մայրաքաղաքից հեռու գտնվելը • Ճանապարհների անհարմարություն /ասֆալտի բացակայություն/ • Սահմանին կից գտնվելը • Սահմանափակ հասանելիություն • Երթուղային տրանսպորտի բացակայություն • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների բացակայություն • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Դպրոցը ապահովում է միայն հիմնական կրթություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՍՊԱՌՆԱԼԻՔ
• Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն • Անասնապահություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Հնարավոր պատերազմական իրավիճակի առկայություն՝ գյուղի վարչական տարածքի մի մասը խիստ սահմանամերձ է:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Պատմամշակութային արժեքներ /խաչքարեր և այլն/ • Գյուղում գործող փոքր բիզնեսներ / Հյուրատուն՝ Gevorgyans Guest House/	• Երթուղային տրանսպորտի լիովին բացակայություն • Զբաղվածության խնդիր • Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների բացակայություն • Մայրաքաղաքից հեռու գտնվելը • Ճանապարհների անհարմարություն • Սահմանին կից գտնվելը • Թերի անվտանգություն • Սահմանափակ հասանելիություն • Մեծաքանակ թվով ՀԷԿ-երի առկայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Անասնապահություն • Մեղվաբուծություն • Բարեկարգ մշակույթի տան առկայություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Հնարավոր պատերազմական իրավիճակի առկայություն՝ գյուղի վարչական տարածքի մի մասը խիստ սահմանամերձ է: • Նոր ՀԷԿ-երի շահագործում • Արտագաղթի պայմաններում դպրոցը կորցնում է իր շահառուներին:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Գյուղատնտեսական տեխնիկա-սարքավորում • Մեղվաբուծություն • Պանրի գործարան • Սառնարանային տնտեսություններ • Պատմամշակութային արժեքներ /Վանական Համալիր Ս. Մամաս, Եկեղեցի Ս. Պողոս և խաչքարեր/:	• Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Դպրոցը ապահովում է միայն հիմնական կրթություն: • Ջրատարների անբարեկարգ վիճակ • Խաղահրապարակների և զբոսայգիների բացակայություն • Երթուղային տրանսպորտի բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Անասնապահություն • Հողագործություն • Սենդի օբյեկտների կառուցում	• Համայնքային ենթակայության գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Կլիմայի փոփոխություն • Արտակարգ իրավիճակների • Արոտավայրերի անապատեցում

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Ջրոսաշրջային ռեսուրսների առկայություն / Խաչքար՝ Տեր Տիրի, Խաչքար՝ Գրիգորի, Գյուղատեղի «Վանք», Խաչքար՝ Ջեսարի, Չեսարի դարպասները:/ • Ջրոսաշրջության զարգացմամբ զբաղվող կազմակերպություն /Բեզուար ՎԲ ՀԿ միջոցներով կառուցվել է տուրիստական տուն Հորս անվանմամբ/ • Խաղողի այգիների առկայություն	• Համայնքային ենթակայության գույքի թարմացման անհրաժեշտություն • Գիշերային լուսավորության բացակայություն • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս • Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Անասնապահություն • Մեղվաբուծություն • Հողագործություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Աշխատատեղերի բացակայություն • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Դպրոցը ապահովում է միայն հիմնական կրթություն:

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Պտղատու այգիների առկայություն • Խաղահրապարակի առկայություն • Մաքուր օդ • Պատմամշակութային արժեքներ /Խաչքար, հուշաղբյուր և հուշարձաններ/:	• Գիշերային լուսավորության թերի համակարգ • Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների բացակայություն • Ոռոգման համակարգի թերի վիճակ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Այգեգործության, մեղվաբուծության, անասնապահության, հողագործության համար նպաստավոր պայմաններ • Ագրո և էկո տուրիզմ • Վերանորոգված մշակույթի տուն /մշակութային կյանքի ակտիվացում/ • Միջին և մանր բիզնեսների ստեղծում • Սառնարանային տնտեսությունների կառուցում	• Գործազրկության միջին մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Կլիմայի փոփոխություն • Արտակարգ իրավիճակներ

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Խաղահրապարակի առկայություն • Մաքուր օդ • Ամբողջական լուսավորության համակարգ • Աղբահանության իրականացում • Պատմամշակութային արժեքներ / Թուխ Սանուկ և այլ Եկեղեցիներ, խաչքարեր և հուշարձաններ/:	• Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս • Հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների սակավություն • Անբարեկարգ մշակույթի տուն /մշակութային կյանքի ակտիվացում/
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Գյուղատնտեսության համար նպաստավոր պայմաններ • Մեղվաբուծություն • Անասնապահություն • Այգեգործություն • Գյուղատնտեսական հողերի առկայություն	• Գործազրկության միջին մակարդակ • Բնակչության արտագաղթի միջին տոկոս • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն • Արտակարգ իրավիճակներ • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Ժամանցի հնարավորության բացակայություն

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
• Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Համայնքում գործող փոքր բիզնեսներ /Կաթնամթերքի մշակման արտադրամաս/ • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Ջրային ռեսուրսների առկայություն • Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Պատմամշակութային արժեքներ՝ Սելիմի Քարավանատունը, խաչքարեր և այլն/	• Գիշերային լուսավորության բացակայություն • Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի պակաս • Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ • Աշխատատեղերի բացակայություն • Միջին և մանր բիզնեսների բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	**ՍՊԱՌՆԱԼԻՔ**
• Միջին և մանր բիզնեսների զարգացում • Այգեգործության, մեղվաբուծության, անասնապահության, հողագործության համար նպաստավոր պայմաններ • Վերանորոգված մշակույթի տուն /մշակութային կյանքի ակտիվացում/ • Սառնարանային տնտեսությունների կառուցում	• Գործազրկության բարձր մակարդակ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Արտակարգ իրավիճակներ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման ռազմավարությունն է բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ համայնք:

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչները կունենան զբաղվածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժիններում:

3.2 Համայնքի զբոսաշրջային ռեսուրսներն ու ներուժը

1. **Համայնք այցելած զբոսաշրջիկների վիճակագրություն**

Աղյուսակ 17.

2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
9582	2241	7080	7882

Ընդհամենը՝ 2019-2022թթ.. զբոսաշրջիկների քանակը 26785 մարդ:

- **Փառատոներ և միջոցառումներ** (ներառյալ համայքների և գյուղերի տոները)
- Արտաբույնքի օր նշվում է հուլիս 5-ին,
- Քարագլխի օր նշվում է օգոստոսի 21-ին,
- Վարդահովիտի օր նշվում է օգոստոսի 20-ին,
- Շատին օր նշվում է նոյեմբերի 7-ին:
- **Համայնքի զբոսաշրջային ռեսուրսներ**

➢ **Բնական**

1. Հորբատեղի գեյզերը, որը բնական գազով ջուր է, այն բխում է գետնի տակից և շրջապատված է քարերով,
2. Գողթանիկի ջրվեժը,
3. Քարագլխի ջրվեժը,
4. Վարդահովիտ վարչական տարածքում առկա է բնական տաք, թթու և առողջարար ջրերի ակունքները,
5. Եղեգիս գյուղում Հրեական գերեզմանի տարածքում առողջարար ջուրը,
6. Շատին գյուղում բնական քարանձավներ Շատի վանքի տարածքում,
7. Քարերի սիմֆոնիան Շատին գյուղում,
8. Քարագլխի լիճը,
9. Հորսի լիճը,
10. Արփա գետի Եղեգիս վտակը:

➢ **Նյութական մշակութային ժառանգություն**

Արտաբույնք: Ամրոց Սմբատաբերդ, Հուշարձան՝ Ավարայրի ճակատամարտում և Երկրորդ Աշխարհամարտում Զոհվածներին, Մատուռ «Չրոի Ժամատուն», Վանական Համալիր Ցաղաց Քար (Ցախաց Քար, Ղոշավանք), Եկեղեցի Ս. Աստվածածին Եկեղեցի Ս. Առաքելոց, Տապանաքար՝ Խաթու Մղլիքի, Եկեղեցի Ս. Նշան (Տապանատուն), Եկեղեցի Ս. Հովհաննես, Խաչքար՝ Սիրաշահի, Խաչքար՝ Փաշաբեկի, Խաչքար՝ Ծատուրի, Խաչքար՝ Մեհրիկի, Խաչքար՝ Վասակի, Խաչքար՝ Թամաքհի, Խաչքար՝ Ստեփանոսի, Տապանաքար՝ Լիպարիտի, Տապանաքար՝ Էսուկանի, Տապանաքար՝ Բարսեղ Քահանայի, Տապանաքար՝ Դետի, Տապանաքար՝ Խոշիշի, Տապանաքար՝ Գոնցայի, Տապանաքար՝ Թումայի, Տապանաքար Խաչատուր Քահանայի, Տապանաքար՝ Գրիգոր Եպիսկոպոսի, Խաչքար՝ Սմպատի, Խաչքար՝ Թանկռոիլի, Եկեղեցի Ս. Կարապետ, Խաչքար՝ Սարգսի, Խաչքար՝ Թեոդորոսի, Խաչքար՝ Գրիգոր Քահանայի, Խաչքար՝ Սարգսի, Խաչքար՝ Բարդուղիմեոսի, Խաչքար՝ Վասակի, Խաչքար՝ Թաթեոսի, Խաչքար՝ Մարիամի, Խաչքար՝ Մանուշակի, Տապանաքար Հովհաննես Քահանայի:

Եղեգիս: Գերեզմանոց. Օրբելյանների Տոհմական Տապանատունը, Տապանաքար՝ Սմբատի, Տապանաքար՝ Մաթունի, Տապանաքար՝ Հազայրդեղի և Հասան Պուղի, Տապանաքար՝ Հակոբի, Տապանաքար՝ Համբարձում Սարկավագի, Տապանաքար՝ Ավանեսի, Խաչքար՝ Մասումփի, Եկեղեցի Ս. Աստվածածին, Խաչքար՝ Ավանիկի, Խաչքար՝ Մելիքշահի, Եկեղեցի Ս.

Նշան (Ս. Կարապետ), Խաչքար՝ Հոգսադեղի, Խաչքար՝ Խոնդրշի, Խաչքար՝ Փաշիկի, Տապանաքար՝ Պարոն Լուսի, Եկեղեցի Ս. Ստեփանոս (Ջորաց Եկեղեցի), Խաչքար՝ Իգնատիոսի, Խաչքար՝ Գրիգորի, Եկեղեցի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Խաչքար՝ Երեմիայի, Խաչքար՝ Սարգսի,Խաչքար՝ Անտոն Վարդապետի, Վանական Համալիր Քարեվանք:

Թառաթումբ: Խաչքար՝ Խոցաղեղի, Եկեղեցի Ս. Հովհաննես, Հուշաղբյուր՝ Երկրորդ Աշխարհամարտում Զոհվածներին, Հուշարձան՝ Երկրորդ Աշխարհամարտում Զոհվածներին,

Հերմոն և Արատես: Վանական Համալիր. Հերմոնի Վանքը (Կնեվանք) Վանական Համալիր. Արատեսի Վանքը, Եկեղեցի Ս. Աստվածածին, Եկեղեցի Ս. Կարապետ, Եկեղեցի Ս. Սիոն, Խաչքար՝ Սահակ Երեցի, Խաչքար՝ Ջահակի, Խաչքար՝ Ղան Աղի, Խաչքար՝ Անդրեասի, Խաչքար՝ Ջիաթի, Խաչքար՝ Հոռոմսիմի, Խաչքար՝ Սիրամարգի:

Հորբատեղ: Եկեղեցի Ս. Հրեշտակապետաց, Խաչքար՝ Եղիշի:

Աղնջաձոր: Քարավանատուն Սելիմի:

Հոր: Խաչքար՝ Տեր Տիրի, Խաչքար՝ Գրիգորի, Գյուղատեղի «Վանք», Խաչքար՝ Ջեսարի:

Շատին: Ամրոց «Բերդաքար», Մատուռ «Անգեղի» («Նահատակի»), Եկեղեցի «Աղվանք», Կամուրջ Ծատուրի, Կամուրջ «Զուբուկ Քյորփի», Մատուռ Ս. Աստվածածին, Մատուռ «Փոսորի», Վանական Համալիր Շատիվանք (Շատանյա Վանք, Շատինի Վանք, Շատիկո Անապատ), Եկեղեցի Ս. Սիոն, Խաչքար՝ Ստեփանոսի, Խաչքար՝ Մահտեսի Հակոբ Ջուղայեցու, Խաչքար՝ Մահտեսի Հակոբ Վաճառականի, Խաչքար՝ Մահտեսի Պետրոսի:

Սալլի: Վանական Համալիր Ս. Մամաս, Եկեղեցի Ս. Պողոս, Խաչքար՝ Դավթի և Կիմա Խաթունի, Խաչքար՝ Ալեքսանոսի, Տապանաքար՝ Տեր Անտոնի:

Վարդահովիտ և Գետիկվանք: Խաչքար՝ Մարտիրոս Քահանայի, Խաչքար՝ Ալեքսանի, Տապանաքար՝ Առաքելի, Տապանաքար՝ Ովաննեսի, Խաչքար՝ Սմբատի, Խաչքար՝ Մանաս Խաթունի, Տապանաքար՝ Շաղուպաթի, Տապանաքար՝ Յոհան Պատանու:

Քարագլուխ: Եկեղեցի Թուխ Մանուկ, Խաչքար՝ Ովանիսի, Խաչքար՝ Թացիկի, Հուշարձան՝ Երկրորդ Աշխարհամարտում Զոհվածներին:

- **Գիշերակացի և սենդի օբյեկտների ընդհանուր քանակը՝**

Գիշերակացի և սենդի օբյեկտների ընդհանուր քանակը 10, որից 2-ը հյուրանոց 8-ը հյուրատուն՝

- Lucytour Hotel /հեռ. 098779778, էլ.փոստ luysitour2016@gmail.com/,
- Arevi Hotel / հեռ. 098186556 էլ.փոստ hotelarevi@gmail.com /,
- Legend Guest House / հեռ. 093668283/,

- Orbategh Resort / հեռ. 093357165/
- Gevorgyans Guest House / հեռ. 077880977 էլ.փոստ gevorgyansguest@gmail.com /,
- The River House Yeghegis / հեռ.093 201277 էլ.փոստ theriverhouseyeghegis@gmail.com /,
- Elegis Village Resort / հեռ. 098 543343 էլ.փոստ Elegis,village@gmai.com /,
- Anahit Guest House / հեռ. 077055058/,
- Hermonatun / հեռ. 09377880/,
- Hors / հեռ. 094194479 Araqelyanma8ine@gmail.com /:

Զբոսաշրջության զարգացմամբ զբաղվող կառույցներ և կազմակերպություններ

Հորս գյուղից 4կմ վերև 2016թ. Բեզուար ՎԲ ՀԿ միջոցներով կառուցվել է տուրիստական տուն, այժմ գործում է: /Հեռ.094194479 էլ. փոստ. Araqelyanma8ine@gmail.com /

Զբոսաշրջության զարգացման հեռանկարներ

Էկոտուրիզմ և ագրոտուրիզմ: Էկոտուրիզմը ճանապարհորդություն է դեպի վայրի բնություն: Էկոտուրիզմի զարգացման համար համայնքն ունի ռեսուրսների բավական հարուստ պաշար և բնական ժառանգություն:

Էկոտուրիզմը համայնքում

- վայրի բույսերի, թռչունների և կենդանիների դիտում
- բույսերի ու հատապտուղների դիտում /հավաքում/
- ակտիվ հանգիստ և զվարճանք բնության գողտրիկ անկյուններում խփված վրաններում
- էկոճամբար
- քայլարշավներ, լեռնամագլցում
- հեծանվային և մոտոարշավներ:

Ագրոտուրիզմի հնարավորություններ: Գյուղացիներն այստեղ զբաղված են բազմազան գյուղատնտեսական գործունեությամբ՝ այգեգործություն, խաղողագործություն և գինեգործություն, անասնապահություն, մեղվաբուծություն, թռչնաբուծություն:

Ագրոտուրիզմը Եղեգիսում

- տարբեր մրգերի բերքահավաք-տուրեր
- մեղր քամելու արարողություն

- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- ձավար աղալու արարողություն
- կաթի վերամշակման և պանրի պատրաստման, կճուճներում պանրի հորման դիտում /մասնակցություն/
- ձիով, ավանակով զբոսանքներ
- շփում ընդանի կենդանիների հետ՝ կով, ոչխար, այծ, հավ, հնդկահավ
- գինիների պատրաստում
- մրգային օղիների պատրաստում:

3.3 Համայնքի պարտադիր խնդիրները

Համայնքի խնդիրները ենթակա են առաջնահերթ կատարման: Ստորև ներկայացվում են համայնքի պարտադիր խնդիրները՝

1) համայնքի կայուն զարգացումը.

2) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.

3) համայնքի գույքի կառավարումը.

4)նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.

5) համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.

6) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը.

7) համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.

8) համայնքում բնակարանային շինարարության խթանումը.

9) համայնքի գյուղերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.

10) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.

11) պետության պաշտպանության իրականացման աջակցումը.

12) աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

13) համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.

14) համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը.

15) համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը.

16) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.

17) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը.

18) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.

19) համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.

20) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

3.4 Համայնքային հիմնախնդիրների սահմանում

- Ասֆալտապատման կարիք ունեն Հերմոն-Վարդահովիտ և Հերմոն-Գողթանիկ ճանապարհները, բարեկարգման և կապիտալ նորոգման կարիք կա մի շարք այլ գյուղերում, ինչպես նաև ճանապարհին կից պետք է կառուցվեն մայթեր, տեղադրվեն եզրաքարեր:
- Պետք է բարեկարգվեն դեպի պատմամշակութային վայրեր տանող ճանապարհները:
- Անհրաժեշտ է համայնքում ունենալ տուրիստական տեղեկատվական կենտրոն:
- Անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցառումներով խթանել միջհամայնքային և ներհամայնքային տուրիզմի զարգացումը, այդ նպատակով բարեկարգել գյուղամիջյան ճանապարհները:
- Անհրաժեշտ է ավարտին հասցնել համայնքի արտաքին լուսավորության կառուցման ծրագիրը, ամբողջական դարձնելով գյուղերի լուսավորության ցանցը:

- Անհրաժեշտ է ապահովել համայնքի մաքրությունը և իրականացնել բարեկարգման աշխատանքներ:
- Անհրաժեշտ է գյուղերում մանկական խաղահրապարակներ կառուցել և առկա խաղահրապարակները վերազինել նոր խաղասարքերով:
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերը վերանորոգման և վերակառուցման կարիք ունեն:
- Երիտասարդների ներգրավվածությունը ապահովելու և արտագաղթը կանխելու նպատակով անհրաժեշտություն կա համայնքում երիտասարդական կենտրոնների ստեղծումը:
- Համայնքում լրջագույն խնդիր է գազաֆիկացումը, այն կապահովի բնակիչների կենսամակարդակի բարելավումը:
- Խիստ անհրաժեշտություն է մանկապարտեզի կառուցումը համայնքում:
- Անհրաժեշտ է կառուցել համայնքապետարանի շենք:
- Համայնքապետարանի տեխնիկա-սարքավորումների աշխատանքների արդյունավետ վերահսկողության և կատարման համար անհրաժեշտ է ավտոպարկի կառուցում:
- Անհրաժեշտ է վերանորոգել և բարեկարգել մշակույթի տները:
- Աղետների ռիսկերի նվազեցում
- Անհրաժեշտ է ապաստարանները բարեկարգել և կահավորել ըստ համապատասխան ստանդարտների:
- Անհրաժեշտ է ապահովել այլընտրանքային էներգիայի կիրառությունը համայնքում:
- Անհրաժեշտ է համալրել հակակարկտային կայանները գյուղերում:

3.5. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Եղեգիս համայնքը նույնպես գտնվում է զբոսաշրջության զարգացման գործընթացում: Տարեցտարի ավելանում է մեր Եղեգիս համայնքում կանգ առնող զբոսաշրջիկների թիվը: Եղեգիս համայնքը հանդիսանում է հարուստ զբոսաշրջային ներուժ ունեցող համայնք, սակայն հանրապետության տուրիզմի շուկայում չափազանց համեստ տեղ է գրավում: Այստեղ հնարավոր է զարգացնել էկոտուրիզմը, ագրոտուրիզմը, այցելություններ պատմական հուշարձաններ, պատմական վայրեր:

Եղեգիս համայնքի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում են գտնվում թվով 2 հյուրանոցներ և 8 հյուրատներ:

Այսպիսով նախատեսվում է համայնքում վերը նշված միջոցներով առաջիկա 5 տարիներին՝ 2023-2027թթ. ավելացնել հյուրատների քանակը, հասցնելով մինչև 15-ի:

Ինչպես նաև զարգացնել ագրոտուրիզմը՝ զբոսաշրջային սեզոնին կազմակերպել այցեր ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցություն բերքահավաքի, գինու և այլ գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին: Կազմել տուրեր և արշավներ տուրիզմ նախընտրողների համար:

ԾՐԱԳԻՐ 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Համայնքի համար կարևորագույն խնդիր է ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպումը: Ուղևորափոխադրումների բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թէ՛ բնակիչների տեղաշարժի և թէ՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները տեղաշարժվելու համար օգտագործում են անհամեմատ թանկ տրանսպորտային միջոցներ, որի հնարավորությունը ոչ բոլորն ունեն: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ևս մեկ ուղևորատար միկրոավտոբուս, առաջինը ձեռք ենք բերել համագործակցելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024 թվականին՝ Հայաստանի Սոցիալական Ներդրումների հիմնադրամի կամ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի օգնությամբ, որի համար անհրաժեշտ է շուրջ 13 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: ՄԱԿ –ի Հայաստանյան գրասենյակի, Վիվասել MTS-ի, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և իհարկե Եղեգիսի համայնքապետարանի կողմից սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2018-2022 թվականներին իրականացվել են Շատին, Սալլի, Հորս, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Հերմոն, Աղնջաձոր, Թառաթումբ գյուղերի արտաքին լուսավորության ցանցի կառուցումը: 2023թ. մի քանի գյուղերի առկա ցանցում լրամշակումներ կատարելուց հետո ամբողջական կդառնա համայնքի լուսավորության համակարգը:

Նախատեսվում է ՀՀ կառավարության և Եղեգիսի համայնքապետարանի միջոցներով 2023թ. ավարտին հասցնել փողոցային լուսավորությունը, որը կարժենա 35 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Եղեգիս համայնքում այժմ իրականացվում են աղբահանման աշխատանքներ, մասնավորապես շաբաթը մեկ անգամ կազմակերպվում է կենցաղային աղբի տեղափոխում, Եղեգիս համայնքի խոշորացումից առաջ համայնքում ընդգրված մի շարք գյուղերում աղբահանություն երբևէ չի իրականացվել, իսկ այժմ համայնքի բոլոր գյուղերում իրականացվում է:

Քանի որ, կարիք կա համայնքում իրականացնել շաբաթական 2-3 անգամ աղբահանում, տեղափոխել առաջացած ամբողջ աղբը, անհրաժեշտություն է առաջանում Ձեռք բերել աղբատար մեքենա համապատասխան աղբամաններով:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել բարեգործական հիմնադրամների կամ դրամաշնորհային ծրագրերի միջոցով, որի համար անհրաժեշտ է շուրջ 65 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

ԱՎՏՈՊԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նախատեսվում է կառուցել ավտոպարկ «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տեխնիկա-սարքավորումների անխափան աշխատանքը ապահովելու նպատակով:

Աղյուսակ 18.

հ/հ	Ապրանքի անվանումը	քանակ, հատ	Սերիա	Միավորի գինը, ՀՀ դրամ /ներառյալ բոլոր հարկերը և տրանսպորտային ծախսերը/	գին, ՀՀ դրամ
1	Կախովի խոտհնձիչ մատնասեգմենտային КСФ-2,1 Б-4	2	71 72	300 000	600 000
2	Անիվավոր տրակտոր Բ, 2-րդ քարշակ դասի, հրիչով JM 1304	1	AGNH13004 11C	15 150 000	15 150 000
3	Էքսկավատոր Elaz-BL880 /VINELAZBL880A20P0498/	1	2580 LL	32 175 000	32 175 000

4	հիդրոմուրճ FD-5X	1		2 425 000	2 425 000
5	անիվավոր տրակտոր 1,4 քարշակ դասի՝ կոմունալի հրիչով, XSB804	2	82007006 82007007	9 300 000	18 600 000
6	Թրթուրավոր տրակտոր 3-րդ քարշակ դասի, թեքվող բուլդոզերային հրիչով BOЛTPA 90 TГ1-A1X	1	0013	17 810 000	17 810 000
	Ընդամենը՝				86760000

հ/հ	Ապրանքի անունը	քանակ, հատ	Մոդել	Vin կոդ	գին, ՀՀ դրամ
1	Միկրոավտոբուս Գ	1	ԳԱԶ 322173-753	X96322173L0899564, տարեթիվ՝ 2020թ.	10 750 000
2	ՈՒԱԶ 390945-552	1		XTT390945L1212784 , տարեթիվ՝ 2019թ.	7 100 000
3	Մամլիչ հասկահավաք RSA 86 SN99045136	2			7 600 000
4	Ազոտային գութան՝ քառախոփ ПГП-4-40-3	2			2 035 000
5	Ինքնաթափ Կամազ	1	65 115-6058-50		33 150 000
	Ընդամենը՝				60635000

Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական տեխնիկաի և տրանսպորտայի միջոցները շահագործումը իրականացվում է «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով:

ԾՐԱԳԻՐ 6

ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Համայնքի համար կարևորագույն խնդիր է գազաֆիկացումը: Բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թե՛ ներդրողների և թե՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև հատում են կանաչ տարածքները:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել սուբվենցիոն ծրագրերի միջոցով:

ԾՐԱԳԻՐ 7

ՀԱՄԱՅՔՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ

Համայնքում բացակայում են ժամանցի վայրերը, մշակույթի տները գտնում են ոչ բարվոք վիճակում, ինչը խոչընդոտում է մշակույթի միջոցառումների կազմակերպմանը: Անհրաժեշտ է համայնքում երիտասարդական կենտրոնի հիմնումը, որը կխթանի երիտասարդական կյանքի աշխուժացմանը համայնքում: Նախատեսվում է իրականացնել մշակույթային տների վերանորոգում Քարագլուխ, Շատին, Թառաթումբ և Գողթանիկ գյուղերում:

ԾՐԱԳԻՐ 8

ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Եղեգիս համայնքում բարեկարգ ճանապարհների տեսակարար կշիռը ճանապարհային ընդհանուր ֆոնդում շատ փոքր է: Նախատեսվում է 2023-2027թթ.. ընթացքում ասֆալտապատ ճանապարհների տեսակարար կշիռը հասցնել 80%-ի: 2023-2025թթ.. նախատեսվում է համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ կատարել Հերմոն-Վարդահովիտ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ, որը կարժենա 350 միլիոն ՀՀ դրամ: Հերմոն-Գողթանիկ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները կիրականացվեն այլ դոնոր կազմակերպությունների միջոցով:

ԾՐԱԳԻՐ 9

ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նախատեսվում է 2023-2027թթ-ին իրականացնել խմելու և ոռոգման ջրի խողովակաշարի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ Եղեգիս համայնքի բոլոր գյուղերում: Խողովակաշարերի ոչ բարվոք վիճակը լուրջ խոչընդոտ է հանդիսանում տնտեսության զարգացման համար, քանի որ հսկայական քանակությամբ բերրի հողեր մինչև հիմա շարունակում են մնալ անջրդի: 2023թ. նախատեսվում է՝ Վարդահովիտ, Գողթանիկ, Հերմոն, Եղեգիս, Հորբատեղ, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորս, Արտաբույնք, Սալլի, Քարագլուխ գյուղերում իրականացնել ոռոգման և խմելու ջրի խողովակաշարերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:

ԾՐԱԳԻՐ 10

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՎԱԿՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

Ապահովել խոցելի ընտանիքների բնակիչների բարեկեցիկ կյանքը համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման /գյուղերում անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների զարգացում/, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների ընդլայնման միջոցով և այլն:

ԾՐԱԳԻՐ 11

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նախատեսված է կառուցել համայնքապետարանի շենք Շատին գյուղում: Ծրագիրն իրականացնելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ համայնքը խոշորացված է և կենտրոնը հանդիսանում է Շատին գյուղը: Համայնքապետարանի շենքային պայմանները վթարային են և քաղաքացիների սպասարկումը ստացվում է շատ դժվար և բարդ: Չկա նաև քաղաքացիների սպասարկման գրասենյակ քանի, որ շենքային ու աշխատանքային պայմանները թույլ չեն տալիս: Առկա չէ նիստերի դահլիճ ավագանու համապատասխան նիստեր անցկացնելու և այլ աշխատանքային հանդիպումներ իրականացնելու համար:

ԾՐԱԳԻՐ 12

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Եղեգիս համայնքում 3-15 տարեկան բնակչության թիվը կազմում է շուրջ 961: Գյուղերում բացակայում են ժամանցի վայրերը, հանգստի գոտիները, զբոսայգիները, այս ամենը դժվարություններ է ստեղծում երիտասարդ սերնդի դաստիարակության համար: Հետևաբար օրակարգային խնդիր է համայնքում մանկական խաղահրապարակների ստեղծումը, զբոսայգիների կառուցումը, ինչը կտա մի շարք դրական արդյունքներ՝

- Այն կդառնա հավաքատեղի համայնքի երիտասարդ մայրերի և երեխաների համար
- Կտեղադրվեն խաղային գործիքներ, վարժասարքեր, ճոճանակներ
- Կկազմակերպվեն երիտասարդների ժամանցը

Ծրագիրը նախատեսվում է 2023-2024թթ.. կյանքի կոչել Հայկական Կարմիր Խաչի և միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, որի դեպքում համայնքը կհատկացնի համայնքային նշանակության հողատարածք խաղահրապարակներ կառուցելու համար:

Նախատեսվում է 2023-2025թթ.. Քաղաքաշինության կոմիտեի կողմից Շատին գյուղում կառուցել մոդուլային մանկապարտեզ 250 երեխաների համար, որի համար նախատեսվում է շուրջ 900 մլն դրամ, որը իրականացնելու է Քաղաքաշինության կոմիտեն:

Ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերն իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

ԾՐԱԳԻՐ 13

ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Արևային էներգիան աշխարհում գոյություն ունեցող էներգիաներից ամենամեծ և անսպառ էներգիայի աղբյուրն է: Այն գնահատված է որպես ամենակայունն և ամենաստույգ էներգիայի

աղբյուրը, որը ժամանակի ընթացքում գրեթե չի փոփոխվում՝ ի տարբերություն վերականգնվող էներգետիկայի այլ աղբյուրների՝ ջրի, քամու, բիոգազի և այլն: Արևի էներգիան հնարավոր է փոխակերպել էլեկտրական էներգիաի: Մեծ է Հայաստանի արևային օրերի քանակը՝ տարեկան շուրջ 300 օր է, ինչը նպաստավոր պայմաններ է վերականգնվող՝ արևային էներգիայի զարգացման համար: Բացի այդ, Եղեգիս համայնքն ընտրել է վերականգնվող էներգիայի զարգացմանն աջակցելու քաղաքականություն, որի արդյունավետ իրականացումը համայնքի համար կապահովի ինչպես դրական միջոցների խնայողություն, այնպես էլ հավելյալ եկամուտ՝ դարանք ուղղելով համայնքային այլ խնդիրների լուծմանը: Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրումը նախատեսվում է համայնքային ենթակայության շենք-շինությունների տանիքներին:

Եղեգիս համայնքի 9 գյուղերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ հնարավոր կլինի հասնել համայնքային միջոցների տնտեսման: Համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինություններտ էլեկտրական հոսանքով ապահովելու և ջեռուցումը ապահովելու նպատակով արևային ֆոտովոլտային կայանի տեղադրումը խնդրի լուծման արդյունավետ տարբերակ է, քանի որ գյուղերը գազաֆիկացված չեն, իսկ էլ. էներգիայի օգտագործումը դառնում է օրվա պահանջ՝ լուծելով բնապահպանական խնդիրներ:

Եղեգիսի համայնքապետարանի էլեկտրական էներգիայի տարեկան ծախսը կազմում է շուրջ 9 մլն ՀՀ դրամ, որից 2 մլն համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների ծախսն է՝ մոտ 51000կվատ:

Ծրագրի իրականացման արդյունքում փողոցների արտաքին լուսավորության ցանցի էլ. էներգիան նույնպես կսնուցվի արևային ֆոտովոլտային կայաններից:

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ, նախատեսվում է 67 կվատ հզորությամբ ինքնավար արևային էլեկտրակայանների ձեռքբերում: Այն կնպաստի նոր աշխատատեղի ստեղծմանը, համայնքային բյուջեի եկամուտների ավելացմանը, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 21.574.000 (Քսանմեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ, որից համայնքային ներդրումը կազմում է 5%՝ 1,078,700 (Մեկ միլիոն յոթանասունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Այլ ներդրումների դեպքում նախատեսվում է համալրել արևային էլեկտրակայանները:

ԾՐԱԳԻՐ 14

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը կարկտահարությունից այժմ իրականացնում է 7 գազագեներատորային հակակարկտային կայանների միջոցով:

Գյուղերի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ դրանցում անցյալ տարիներին կարկուտի հետևանքով բերքի կորուստը կազմել է 50 տոկոսից ավելի:

Արդյունավետությունը կազմում է մինչև 45%: Մեկ գեներատորի պաշտպանող տարածքը կազմում է մինչև 80 հա (կախված երկրապատկերից և քամիների ազդեցությունից: Այս տարբերակները համարվում են ամենաէժան և հեշտ սպասարկվողները:

Կայանները տեղադրվել են ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրների լուծման հրատապ ծրագրով: Կայանների տեղադրման համար ծախսվել է 14 միլիոն դրամ:

Կայանները գործում են հեռակառավարման ռեժիմով՝ GPRS կապի հիման վրա:

Նախատեսվում է առաջիկայում ավելացնել ևս 6 գազագեներատորային հակակարկտային կայաններ:

ԾՐԱԳԻՐ 15

ՀԱՆԴԱՄԻՋՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԱՆԱՍՆԱԽՄՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԵՎ ՄԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նախատեսված է անասնախմոցների տեղադրում և մակատեղիների կառուցում մի շարք գյուղերում: Ծրագիրը 50% իրականացվել է Ռազմավարական զարգացման գործակալության, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և այլ կազմակերպություններ հետ համատեղ:

Նախատեսվում է առաջիկա տարիներին ավելացնել և ամբողջական դարձնել ծրագիրը, տարբեր կազմակերպությունների հետ համագործակցելով:

Նախատեսվում է «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի և այլ ֆինանսավորող կազմակերպությունների հետ համատեղ իրականացնել հանդամիջյան ճանապարհների բարեկարգման և հարթեցման աշխատանքներ:

ԾՐԱԳԻՐ 16

ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Գյուղատնտեսության կայուն զարգացմանը խթանելով նպաստել գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Դրան կարելի է հասնել ներդրումային ծրագրերով, տաղավարների և տեխնոլոգիաների կառուցմամբ: Իրականացնելով ծրագիրը կարելի է ապացուցել, որ բնությունը պահպանելով և մշակելով ևս կարելի է եկամուտ ստանալ:

Հարկ է նշել, որ համայնքում աճում են էնդեմիկ և վերացման եզրին հայտնված բուսատեսակներ՝ ծառակերպ գիհու նոսրանտառներ, տանձենու ռելիկտային այգիներ, ալոճենիներ, բարբարիսներ, վայրի նուշի և այլ ծառատեսակներ որոնց անունները հայտնի չեն:

Ծրագիրը իրականացնելուց հետո ամեն տարի կանցկացվի «Բերքի փառատոն», որը կհամախմբի հարյուրավոր գյուղատնտեսների, գործարարների, ապահովում հարթակ՝ ուղիղ կապ հաստատելու, բարձրորակ գյուղմթերք ցուցադրելու և վաճառելու համար:

3.6 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման բացակայությունը:

Համայնքի գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման զարգացման խոչընդոտները, պատճառները բազմազան են՝ սկսած մրցունակ ծառայությունների, աշխատանքների, ապրանքների արտադրությունից մինչև նրանց իրացում: Գյուղերում արտադրված գյուղմթերքները իրացվում են շուկայականից անհամեմատ ցածր գներով: Այստեղ գերակշռում են շահութաբերության ցածր մակարդակով աչքի ընկնող գյուղմթերքների արտադրությունը:

Գյուղացիները դժկամությամբ են հրաժարվում ավանդական մշակություններից անցում կատարել դեպի ավելի մրցունակ (օրինակ հացահատիկային կուլտուրաների, կաթնամթերքի, մսամթերքի արտադրությունից՝ ավելի շահութաբեր՝ այգեգործություն, կամ ասենք ավելի պահանջարկ ունեցող և մրցունակ մշակաբույսերի մշակություն): Գյուղատնտեսության արդյունաբերականացումը և արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկման բացակայությունը հնարավորություն չի տալիս այդ ոլորտում ապահովել զբաղվողների եկամուտների աճ: Համայնքի գործարար հնարավորությունների

«քարոզչության» բացակայությունը, չի նպաստում օտարերկրյա ընկերությունների կամ սփյուռքահայության կողմից համայնքում ներդրումներ անելու գրավչությանը:

2) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման բացակայությունը:

3) *Համայնքում չկան մանկապարտեզներ, խաղահրապարակներ:* Դրանց բացակայությունը խոչընդոտում է նախադպրոցական կրթության զարգացմանը: Համայնքի ֆինանսական հնարավորությունների դեպքում գյուղերին անհրաժեշտ են խաղահրապարակներ և մանկապարտեզներ:

4) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:

Համայնքում առկա է գործազրկության բարձր մակարդակ: Դիտվում նաև վերջին 3 տարիներին արտաքին տրանսֆերտների կտրուկ նվազում: Գործարար ակտիվության մակարդակը ցածր է (տնտեսական մրցակցություն, մրցունակ արտադրանք, տնտեսաաշխարհագրական դիրք և այն): Այս հիմնական գործոններով է պայմանավորված բնակչության սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը:

5) Համայնքի գյուղերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը:

Խոշորացված համայնքի զարգացման համար լուրջ խոչընդոտ է համայնքի գյուղերի բարեկարգումը, կանաչապատումը, սանիտարական մաքրումը և աղբահանության կազմակերպումը:

6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը:

Խոշորացված համայնքում իսպառ բացակայում են ներհամայնքային և միջհամայնքային ուղևորափոխադրումները, որի հիմնական պատճառն այն է, որ մասնավոր ընկերությունների համար նշված ծառայությունների մատուցումը շահութաբեր չէ:

Կարևոր խնդիր է նաև ճանապարհների բարեկարգման համար անհրաժեշտ ճանապարհային տեխնիկայի ձեռքբերումը, ինչը կախված է համայնքի բյուջեի սուղ հնարավորություններից:

7) Գյուղերում գյուղատնտեսության զարգացման խթանում:

Գյուղերում պետք է օգնություն ցուցաբերել անցնելու առավել մրցունակ գյուղմթերքների արտադրության: Գյուղմթերքների արտադրության մեջ դեռևս ներդրված չեն միջազգային

չափանիշներին բավարարող պայմաններ, ինչը հնարավորություն կտա բարելավել արտադրանքի որակն ու արտաքին տեսքը, բարձրացնել մրցունակությունը:

8) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող գյուղերում՝ զբոսաշրջության զարգացման ցածր մակարդակ:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման հսկայական ներուժ (նպաստավոր աշխարհագրական դիրք, բարենպաստ կլիմա, հյուրատներ, գտնվում են միջպետական և տուրիստական ուղիների խաչմերուկներում): Այս ամենով հանդերձ համայնքի զբոսաշրջային ներուժը բավարար լուսաբանված չէ տարբեր տեղեկատվական աղբյուրներում, այդ թվում էլեկտրոնային միջոցներով:

9) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը:

Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների ակտիվ մասնակցություն ապահովելու համար բացակայում է համայնքի հասարակական կյանքն ապահովող կազմակերպությունների հետ հաշմանդամների համագործակցությունը, ցածր է իրազեկվածության մակարդակը, համայնքում զգացվում է սոցիալական աշխատողների պահանջ: Անհրաժեշտ է ահապովել համայնք-սոցիալական աշխատող-հաշմանդամ շղթայի կենսունակությունը:

10) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում:

Համայնքն ունի մտավոր մեծ ներուժ, սակայն համայնքում առկա է երիտասարդների գործազրկության բարձր մակարդակ: Աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մեծ մասը արտագնա աշխատանքի են մեկնում մայրաքաղաք կամ արտերկիր:

11) *Բարեգործության խթանումը՝* համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

4.1 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2018-2022թթ. փաստացի տվյալներով աճել են:

ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

2018-2022թթ..



Գծապատկեր 7. Սեփական փաստացի եկամուտներ[8]:

[8] Գծապատկեր. Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2018-2022թթ.: Գծապատկերը հեղինակի կողմից:



Գծապատկեր 8. Ընդհանուր և սեփական եկամուտներ[9]:



Գծապատկեր 9. Ընդհանուր և սեփական եկամուտներ[10]:

[9] Գծապատկեր. Ստորև ներկայացված է Եղեգիս համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2018-2022թթ..տվյալներով:

Առաջիկա տարիներին ակնկալվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ համայնքների խոշորացման, տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականցվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

<u>Համայնքի բյուջեի եկամտային մաս. 276 727.7 հազ. դրամ</u>

Հատված 1 <u>276 227.7</u> հազ. դրամ որից՝

Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար 1800.0 հազ. դրամ,

Անշարժ գույքի հարկ 8200.0 հազ. դրամ

Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 28 800.0 հազ. դրամ,

Գույքահարկ շենքերից և շինություններից՝ 200.0 հազ. դրամ

Տեղական տուրքեր՝ 1000.0 հազ. դրամ,

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 203 427.7 հազ. դրամ

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 7200.0 հազ. դրամ

Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 5600.0 հազ. դրամ

Տեղական վճարներ՝ 12 500.0 հազ. դրամ

Այլ Եկամուտներ(ՀՈԱԿ-ից ստացող)՝ 8000.0 հազ.դրամ

-Տարեվերջի ազատ մնացորդ 94940.4 հաղ.դրամ

Այդ թվում՝

[10] Գծապատկեր. Ստորև ներկայացված է Եղեգիս համայնքի եկամուտների ծախսերի դինամիկան 2018-2022թթ..տվյալներով:

-Վարչական բյուջեյի մնացորդ՝ 69217.5 հազ.դրամ

-Ֆոնդային բյուջեյի մնաղորդ՝ 25722.9 հազ,դրամ

<u>Համայնքի բյուջեի ծախսային մաս՝ 371668,1 հազ. դրամ/Հատված 2/</u>

01.1.1- օրենսդիր եւ գործադիր մարմինների պետական կառավարում՝ 180760,4 հազար դրամ, /Հատված 2/ այդ թվում՝

-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111-130 000.0 հազ. դրամ

-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր 4211 -100.0 հազ. դրամ

-Էներգետիկ ծառայություններ 4212-4500.0 հազ. դրամ

-Կապի ծառայություններ 4214-2000.0 հազ. դրամ

-Ապահովագրական ծախսեր 4215-200.0 հազ. դրամ

-Ներքին գործուղումներ 4221-400.0 հազ. դրամ

-Համակարգչային ծառայություններ4232 -500.0 հազ. դրամ

-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ-4233-500.0 հազ.դրամ

-Տեղակատվական ծառայություններ 4234-300.0 հազ. դրամ

-Ներկայացուցչական ծախսեր 4237-200.0 դրամ

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 500.0 հազ. դրամ,

-Մասնագիտական ծառայություններ 4241- 900.0 հազ. դրամ,

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-900.0 հազ. դրամ

-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252-980.0 հազ. դրամ

-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-990.0 հազ. դրամ

-Տրանսպորտային նյութեր 4264-2000.0 հազ. դրամ

-Առողջապահական և լաբորատոր նյութեր 4266-300.0 հազ.դրամ

-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267-950.0 հազ. դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. դրամ

-Պարտադիր վճարներ 4823- 1000.0 հազ.դրամ

-Շենքերի և շինությունների շինարարություն 5112-13540.4 հազ.դրամ

-Տրանսպորտային սարքավորումներ 5121-12000.0 հազ.դրամ

- Վարչական սարքավորումներ 5122-4000.0 հազ. դրամ,

-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր 5133-500.0 հազ. դրամ

-Նախագծահետազոտական ծախսեր 5134-500.0 հազ. Դրամ

-Հող 5411-2500.0 հազ.դրամ

01.3.3- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 1500.0 հազ. դրամ /Հատված 2/

-Համակարգչային ծառայություններ 4232-1500.0 հազ. դրամ

01.6.1- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ -16400.0 հազ դրամ/Հատված 2/

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -1000.0 հազ.դրամ

- Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-13000.0 հազ.դրամ

-վարչական սարքավորումներ 5122-900.0 հազ դրամ

-Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657-1500.0 հազ. դրամ

02.2.1 Քաղաքացիական պաշտպանություն-1700.0 հազ. դրամ

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 200.0 հազ. դրամ,

-Տրանսպորտային նյութեր 4264-300.0 հազ. Դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-200.0 հազ. Դրամ

-Այլ մեքենաներ և սարքավորումներ 5129-1000.0 հազ դրամ

04.2.1- Գյուղատնտեսություն-7700.0 հազ. դրամ /Հատված 2/

-Մասնագիտական ծառայություններ 4241 – 900.0 հազ. Դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. Դրամ

-- Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-300.0 հազ.դրամ

Այլ կապիտալ դրամաշնորհներ-4657-6000.0 հազ. դրամ

04.2.4 -Ոռոգում –27450.0 հազ. դրամ /Հատված 2/

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1000.0 հազ. դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-950.0 հազ. Դրամ

-- Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-500.0 հազ.դրամ

-Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 23 000.0 հազ. դրամ

--նախագծահետազոտական ծախսեր 5134- 2000.0 հազ դրամ

04.5.1- Ճանապարհային տրանսպորտ -6700.0 հազ. դրամ/Հատված 2/

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 300.0 հազ. դրամ,

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-900.0 հազ.դրամ

-Տրանսպորտային նյութեր 4264-1000.0 հազ. դրամ,

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. դրամ

-- Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-4000.0 հազ.դրամ

05.1.1- Աղբահանում – 12000.0 հազ.դրամ, /Հատված 2/

-Կոմունալ ծառայություններ 4213 -12000.0հազ. դրամ

05.6.1. -Շրջակա միջավայրի պաշտպանություն 500.0 հազ.դրամ/Հատված 2/

-Մասնագիտական ծառայություններ 4241-500.0 հազ.դրամ

06.3.1 -Ջրամատակարարում – 16500.0 հազ. դրամ /Հատված 2/

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-200 .0 հազ.դրամ

-Մասնագիտական ծառայություններ 4241-400.0 հազ. դրամ

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-900.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ.դրամ Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-500.0 հազ.դրամ

-Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 12 000.0հազ. դրամ

- նախագծահետազոտական ծախսեր -5134-2000.0 հազ. դրամ

06.4.1- Փողոցների լուսավորում-32700.0 հազ. դրամ/Հատված 2/

-էներգետիկ ծառայություններ 4212-9500.0 հազ. դրամ

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-500 .0 հազ.դրամ

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-400.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-1000.0 հազ. Դրամ

Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-300.0 հազ.դրամ

- Շենքերի և շինությունների շինարարություն 5112-19 000.0 հազ.

-նախագծահետազոտական ծախսեր -5134-2000.0 հազ. դրամ

07.1.3 Բժշկական սարքեր և սարքավորումներ 5000.0 հազար դրամ

-Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639- 5000.0 հազ. դրամ

08.2.4 -Այլ մշակութային կազմակերպություններ-7200.0 հազ.դրամ /Հատված2/

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -800 0 հազ. Դրամ

-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-900.0 հազ. դրամ

- Հատուկ նպատակային այլ նյութեր 4269– 1500.0 հազ. դրամ

- Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639- 1000.0 հազ. Դրամ

-Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657-3000.0 հազ.դրամ

10.4.1- Ընտանիքի անդամներ և զավակներ 2500.0 հազ. դրամ/Հատված 2/

-Այլ նպաստներ 4729-2500.0.դրամ

10.7.1- սոցիալական հատուկ արտոնություններ/այլ դասերին չպատկանող/ - 3 000.0 հազ. դրամ/Հատված 2/

-Այլ նպաստներ բյուջեից 4729-2500.0 հազ. դրամ

-Հուղարկավորության նպաստներ բյուջեից 4726-500.0

11.1.2 -Համայնքների պահուստային ֆոնդ 50 057.7 հազ.**դրամ**

-Պահուստային միջոցներ 4891—50057.7 հազ. դրամ:

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	2023	2024	2025	2026	2027
1	2	3	4	5	6	7	8
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ						
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	40000.0	41000.0	41600.0	42800.0	43400
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	10000.0	10200.0	10400.0	10600.0	10800.0
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	29000.0	29700.0	30000.0	30900.0	31200.0
1130	1.3 Տեղական տուրքեր	7145	1000.0	1100.0	1200.0	1300.0	1400.0
1150	1.4 Պետական տուրքեր	7146	0	0	0	0	0
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	203427.7	216374.2	218374.2	220000.0	230000.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400					
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	12800.0	12900.0	13000.0	13100.0	13500.0
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	20000.0	22000.0	23000.0	24000.0	24000.0
1350	3.5 Վարչական գանձումներ	7422	0	0	0	0	0
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	0	50.0	100.0	100.0	150.0
1390	3.9 Այլ եկամուտներ	7452	3200.0	3200.0	3400.0	3400.0	3600.0

Աղյուսակ 19. Համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսում 2023-2027թթ..

5.ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

5.1. Համայնքի աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ գործելու կառավարման համակարգ

1) Համայնքի աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ գործելու կառավարման համակարգը ստեղծվել է համայնքի ղեկավարի 15.05.2018թ թիվ 73-Ա որոշմամբ: Համակարգը ղեկավարում է ԱՌԿ խորհուրդը: Խորհուրդը ի պաշտոնե ղեկավարում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարի տեղակալը հանդիսանում է ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ և տարհանման ու պատսպարման պատասխանատու: Խորհրդի կազմում ընդգրկվել են ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ:
2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

Աղյուսակ 20. Համայնքի ԱՌԿ խորհրդի կառուցվածքը



5.2. Համայնքի աղետների ռիսկի նվազեցում

Աղյուսակ 21. Համայնքի ընդհանուր վտանգների, խոցելիության նկարագրություն, դրանց բացասական հետևանքները և հնարավոր լուծումները

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
Երկրաշարժ			
Համայնքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում (Amax=0.2g արագացումով (8,5 բալ)): Ուժեղ երկրաշարժի դեպքում Համայնքում ցածր սեյսմակայունության ու վթարային շենք-շինություններում տեղի կունենա մասնակի կամ ամբողջական փլուզումներ: Զանգեզուրի երկրաշարժի դեպքում կվնասվեն Եղեգիս համայնքի 12բնակավայրերը:8 բալի դեպքում հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները կլինեն թեթևակի, տիպայինում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի կունենան ավերվածություններ:	Համայնքապետարան, փոստի շենք, բնակելի տներ այլ շենք-շինություններ, կամուրջներ, մարդիկ, կենդանիներ և այլն:	Երկրաշարժը կարող է դառնալ մարդկային և նյութական կորուստների,ինչպես նաև երկրորդային երևույթների առաջացման պատճառ Զանգեզուրի երկրաշարժի ազդեցության գոտում կհայտնվեն Եղեգիս համայնքի 12 բնակավայրերը, որոնցից Թառաթումբում վնասվում է 8 շենք, զոհվում 4 մարդ, վիրավորվում 3 մարդ, Հորսում վնասվում է 5 տուն, զոհվում 2մարդ, վիրավորվում 2-ը, Շատինում՝ վնասվում է 25 տուն, զոհվում 11մարդ, վիրավորվում 8-ը, Սալլիում՝ վնասվում է 3 տուն, զոհվում 2մարդ, վիրավորվում 1-ը, Քարագլխում՝ վնասվում է 12 տուն, զոհվում 5մարդ, վիրավորվում 4-ը:	Բնակչության ուսուցում, սեյսմիկ ռիսկի գնահատում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն, համայնքի զարգացման ծրագրերում աղետի ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում, վթարային շենք շինությունների ամրացում:
Ամպրոպ / կայծակ			
Ամպրոպներն ու կայծակները Համայնքում միշտ էլ դիտվել են: Ամպրոպը և կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը: Վերջին ժամանակներում կայծակը վնասեց էլեկտրականությունը:	Էլեկտրասարքավորումներ, մարդիկ, անասուններ և այլն:	Էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Ընդհատվում է էլեկտրահաղորդակցումը և կապը: Մարդկանց առողջության և կյանքի համար մեծ սպառնալիք է հանդիսանում, անասունների համար ևս վտանգը մեծ է:	Շանթարգելների տեղադրում: Բնակչության իրազեկում, ուսուցում:
Երաշտ			
Երաշտը շատ հաճախ տեղումների սակավության կամ ոռոգման պակասի հետևանք է: հունիս-հուլիս ամիսներից սկսած կարող են դիտվել	Ցանքատարածքներ, ցանքեր, այգիներ, խոտհարքներ, որը բերում է անասնապահությ	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ հողագործության, անասնապահական ոլորտներում,որը վնասը	Նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի ներմուծում: Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
սակավաջրության հետ կապված երեւույթներ, ինչը երաշտը դարձնում է անխուսափելի հիմնականում Եղեգիս համայնքի 12 բնակավայրերում: Բերքի կորուստը պայմանավորված է նաև ընդհանուր ոռոգման ցանցի բացակայությամբ:	ուն համար լուրջ խնդիրներ:	կազմում է այգեգործության և մշակովի ցանքատարածության 65% -ը: Մեծանում է գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների, մշակաբույսերի ոչնչանալու հավանականությունը դառնում է սակավաջրության պատճառ:	Ոռոգման ցանցի բարեկարգում, ընդլայնում: Ջրահեռացման համակարգերի ստեղծում:
Ցրտահարություն			
Համայնքին բնորոշ է ցրտհարություն գարնանային ամիսներին:	Այգիներ, բանջարաբոստանային որոշ կուլտուրաներ, բերք,	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ,որի արդյունքում կվնասվի գյուղատնտեսության 60-80% -ը:	Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում: Բնակչության իրազեկում ցրտահարությունից պաշտպանելու միջոցների, ձևերի վերաբերյալ:
Քարաթափում			
Համայնքի Շատին բնակավայրի քարաթափման գոտիներում գտնվում են 31և ավելի շենք-շինություններ	նյութական արժեքներ	Քարաթափման հետևանքով հնարավոր են մարդկային վիրավորումներ ու կորուստներ:կվնասվեն մարդիկ,շինություններ և գյող.կենդանիներ	Քարաթափման հատվածների մասնագիտական զննում, քարտեզագրում, հնարավորության դեպքում իրականացնել արհեստական քարաթափում: Պարբերական մոնիթորինգի կազմակերպում, վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում:
Ձնաբուք			
Համայնքին բնորոշ առատ ձյունը և ուժեղ քամիները պատճառ են դառնում ձնաբքի, ինչի հետևանքով հիմնականում խցանվում են միջհամայնքային ճանապարհը: Ճանապարհի խցանումը դառնում է լրացուցիչ խնդիրների առաջացման պատճառ: Ճանապարհների խցանման	Կփակվեն ճանապարհները, էլեկտրահաղորդակցությունը կխափանվի, մարդկանց տեղաշարժը կլինի ոչ անցանելի:	Եղեգիս համայնքի վարչական տարածքով անցնող միջպետական ,միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների խցանում: Էլեկտրամատակարարման խափանում,ավտոտրանսպորտի արգելափակում : Համայնքի ներհամայնքային և միջահամայնքային	Հուսալի օդերևույթաբանական տեղեկատվության ապահովում: Համապատասխան տեխնիկայի ձեռքբերում:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
պատճառով շտապ օգնության մեքենաները չեն կարողանում ժամանակի օգնություն ցուցաբերել մարդկանց:		ճանապարհների գրեթե 50%-ը ձնաբքի պատճառով կփակվեն:	
Հորդառատ տեղումներ			
Համայնքում հնարավոր են հորդառատ տեղումներ,որի անընդհատությունը գյուղատնտեսության համար կբերի բացասական հետևանքներ	Հիմնականում վնասը կհասցվի գյուղատնտեսությանը,կվնասվի բանջարաբոստանային կուլտուրաները, խոտը: Բնակելի տները, Տնամերձ հողատարածքները կավիրվեն:	Առատ տեղումները դառնում են սելավների առաջացման, գետի վարարման և հեղեղումների պատճառ: Առատ տեղումները խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը,անասնապահությանը:Գետերի վարարման դեպքում ևս կվնասվել ցանքատարածություններ որը իր հերթին կբերի գյուղատնտեսությանը վնաս:	Մշակել և կիրառել կանխատեսման և վաղ ազդարարման համակարգ: Ապահովել բնակչության վաղ իրազեկումը: Համապատասխան տեխնիկայի ձեռքբերում: Ճանապարհների եզրերին հեղեղատների կառուցում և ճանապարհների բարեկարգում:
Կարկտահարություն			
Կարկտահարությունների պատճառով բերքի կորուստները Համայնքում հասնում են 40-50%: Համայնքն ունի 1 հակակարկտային կայանք, որը սպասարկում է վարելահողերի ընդամենը 25%:	Այգիներ, ցանքատարածքներ, բերք, ընտանի կենդանիներ, շինություններ, տրանսպորտային միջոցներ:	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում է բերքը, ցանքատարածքները, կոտրվում շինությունների ապակիները և տանիքածածկերը, վնասում տրանսպորտային միջոցները: Բերում է էական նյութական կորուստների:Կվնասվի գյուղատնտեսության գրեթե 60%-ը,որը լուրջ սպառնալիք է մարդկանց համար:	Հակակարկտային միջոցների տեղադրում, կանխատեսման և վաղ ազդարարման համակարգի մշակում և կիրառում:
Ուժեղ քամիներ			
Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում Համայնքին:	Բնակելի տների, շենք-շինությունների տանիքներ, էլեկտրահաղորդակցման համակարգ, ցանքատարածքներ, այգիներ,	Վնասվում են նաև բնակելի տների և շենք-շինությունների տանիքածածկերը, լուսամուտները: Քամիները մեծ վնասներ են պատճառում նաև գյուղատնտեսական ոլորտին: գարնան և աշնան ժամանակահատվածի քամիները մեծ վնաս են հասցնում այգիներին,	Համայնքային բյուջեով կամ այլ աղբյուրներից նախատեսել միջոցներ ուժեղ քամիների հետևանքների վերացման աշխատանքների համար: Մշակել կանխատեսման և վաղազդարարման համակարգ և կիրառել: Ապահովել բնակչության վաղ իրազեկումը:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
		հատկապես պտղատու և մրգատու՝ դառնալով բերքի թափման պատճառ,որը կազմում է գյուղատնտեսության 35 %-ը:	Այգիների երկանքով պաշտպանիչ շերտի կառուցում-տեղադրում /բնական կամ արհեստական անտառաշերտ, պաշտպանիչ ցանկապատեր/
Ջրամբարի պատվարի վթար			
Քարագլխի և Հորսի ջրամբարների պատվարների փլուզման դեպքում ջրածածկման գոտում կհայտնվեն Համայնքի հողատարածքներ	Համայնքի հողատարածքներ Քարագլխի ջրամբաի պատվարի փլուզման դեպքում գ. Քարագլուխ 12 տուն-56 բնակիչ,23հա մշակովի հողատարածքներ, գ. Շատին 11 տուն-50 բնակիչ, 20հա մշակովի հողատարածքներ, Հորսի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում,գ, Հորս 18հա հողատարածք,10տուն-42 բնակիչ,1օբյեկտ-6 աշխատող	Կարող է առաջանալ մարդկային և նյութական արժեքների կորուստ,կվնասվի մշակովի ցանքատարածության 61 հա-ը,մարդկանց ժամանակին տարհանելու դեպքում չեն լինի կորուստներ: Քարագլխի ջրամբաի պատվարի փլուզման դեպքում գ. Քարագլուխ 12 տուն-56 բնակիչ,23հա մշակովի հողատարածքներ, գ. Շատին 11 տուն-50 բնակիչ, 20հա մշակովի հողատարածքներ, Հորսի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում,գ, Հորս 18հա հողատարածք,10տուն-42 բնակիչ,1օբյեկտ-6 աշխատող	Մշակել և կիրառել կանխատեսման և վաղ ազդարարման համակարգ: Ապահովել բնակչության վաղ իրազեկումը:
Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհներ-			
Դաշտերում խոտածածկ տարածքների հրդեհների ժամանակ կարող են այրվել անտառներ, մրգատու ծառեր, խոտհարկեր:	Անտառներ, խոտածածկ տարածքներ, կենդանիներ, բուսականություն, մրգատու ծառեր	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության նվազում,: Կենդանիների և բույսերի 60-70 տոկոսի ոչնչացում,ինչպես նաև անհետացում, նաև հողի բերքատվության 45-55 տոկոսի նվազում:	Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Բնակչության իրազեկում: Տեղեկատվական վահանակների տեղադրում:
Անասունների հիվանդություններ			
Անասնահամաճարակի տարածում Համայնքի գյուղատնտեսական	Անասուններ, մարդիկ	Կյանքի և առողջության սպառնալիք, անասունների կորուստ:	Ժամանակին պատվաստումների կատարում: Պրոֆիլակտիկ

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
կենդանիների և թռչունների շրջանում			միջոցառումների իրականացում:
Բույսերի հիվանդություններ			
Համայնքի անտառների, ցանքատարածությունների կամ այգիների լայնածավալ վարակվածություն (կրծողների քանակի ավելացում)	Մշակվող հացահատիկ, բանջարաբոստանային բուսատեսակներ, անտառներ	Բերքի նվազում, կորուստ, նյութական կորուստ,որը իր հերթին կվնասի լուրջ խնդիր համայնքի համար:	Համակարգված պայքարամիջոցների կիրառում տարվա բոլոր ժամանակահատվածներում :
Պայթյուններ			
Համայնքում առկա բենզալցակայանում և բնակելի տներում հրդեհային անվտանգության կանոնների խախտման հետևանքով կարող են լինել պայթյուններ:	Բնակելի տներ, բազմաբնակարան շենքեր, դպրոց և այլ շինություններ,մարդկանց շրջանում հնարավոր են թունավորումներ որոնք կվտանգեն կյանքին և առողջությանը:	Նյութական և մարդկային կորուստներ,քիմիական թունավորումներ,որի դեպքում ոչ միայն կտուժի համայնքը այլ նաև համայնքին հարակից գտնվող բնակավայրերը:	Անվտանգության կանոնների ուսուցում, պահպանում: Բնակչության իրազեկում, ուսուցում: Ոսկու հանքի շահագործման դադարեցում:
Հրդեհներ			
Հրդեհային անվտանգության կանոնների խախտման հետևանքով կարող են առաջանալ հրդեհներ:	Բնակելի տներ, բազմաբնակարան շենքեր, դպրոցներ,խոտաածք տարածքներ և այլն:	Նյութական և մարդկային կորուստներ,կվտանգվի մարդկանց կյանքն ու առողջությունը,կախված հրդեհի տարածությունից կայրվեն ու կվոչնչացվեն գույք և այլ իրեր:	Անվտանգության կանոնների ուսուցում, Բնակչության իրազեկում, ուսուցում,հրդեհային անվտանգության պահպանում:

Աղյուսակ 22. Համայնքի կարողությունների նկարագրություն

Հ/հ	Կարողություն	Վտանգ																
		Երկրաշարժ	Կարկուտ	Երաշտ	Ցրտահարություն	Քարաթափություն	Անտառային հրդեհներ	Խոտածածկ տարածքի հրդեհներ	Առատ ձյուն	Ձնարագ	Հորդառատ տեղումներ	Գետի վարարում, հեղեղում	Ուժեղ քամիներ	Ջրհեղեղ	Համաճարակ	Սելավ	Կայծակ	Սողանք
Մարդկային և կառուցվածքային ռեսուրսներ		Խոցելիություն																
1.	Մարդկային ներուժ	x	x		x	x			x	x			x		x		x	x
2.	Համայնքապ ետարան	x	x						x				x				x	
3.	Դպրոցներ	x	x						x				x				x	
4.	Մանկապար տեզներ	x	x						x				x				x	
5.	Բուժկետ	x	x						x				x				x	
6.	Առողջարան ներ	x	x						x				x				x	
7.	ՀՓՋ	x	x						x				x				x	
8.	Խանութներ /70 հատ/	x	x						x								x	
9.	Հացի փուռ /6 հատ/	x	x	x	x			x					x		x			
10.	Տաքսի ծառայությու ն	x	x						x	x	x		x			x	x	
11.	Գեղարվեստ ի դպրոց	x	x						x				x				x	
12.	Մարզադահլ իճ	x	x						x				x				x	
13.	Եկեղեցի	x	x						x				x				x	
14.	Մշակված տնամերձ ցանքատար ածքներ, այգիներ	x	x	x	x	x		X	x		x	x	x		x	x	x	x

15.	Խոշոր և մանր եղջերավոր անասուններ, մեղվաընտանիքներ	x	x	x	x	x	x	x			x		x		x	x	x	x
16.	Արտաքին ճանապարհների լավ վիճակը	x				X			x	x	x					x		x
17.	Տարահանման պլան	x																x
18.	Աղետներին արձագանքման պլան	x																x
19.	Արագ արձագանքման խումբ	x	x		x	x	X	x	X	x	x	x	x		x	x	x	x
20.	Թռչնաբուծարան	x	x	x	x	x							x		x		x	
21.	Պանրագործական փոքր արտադրամասի առկայությունը	x	x	x				x					x		x		x	x
22.	Գլխավոր ավտոճանապարհի մոտ գտնվելը	x	x		x	X			X	x	x		x			x	x	
23.	Ոռոգման ներհամայնքային ցանցի առկայություն	x				x					x	x				x		x
24.	Խմելու ջրի ցանցի առկայություն	x				x					x	x				x		x
25.	Կազմակերպված աղբահանություն	x	x			x					x		x			x		x

Բնական ռեսուրսներ																		
26.	Անտառի առկայություն	x		x	x	x	X	x					x		x		x	x
27.	Գետի առկայություն	x		x		x					x	x		x				x
28.	Հողային բավարար ռեսուրսներ	x		x	x	x	x	x		x	x	x		x	x	x		x
Տեխնիկական միջոցներ																		
29.	Ֆիքսված և բջջային հեռախոսակապ	x				x		x	x	x			x				x	x
30.	Ինտերնետ	x				x		x	x	x			x				x	x
31.	Տեղեկատվական աղբյուրների հասանելիություն	x				x		x	x	x			x				x	x
32.	Որոշակի տրանսպորտային միջոցներ 150 մարդատար մեքենաներ 40 բեռնատար մեքենաներ 1 ավտոբուս 2 միկրոավտոբուս 15 տրակտորներ	x				x			x	x	x	x	x			x	x	x
33.	Հատուկ շչակ	x							x				x				x	
Ֆինանսական միջոցներ																		
34.	Համայնքի բյուջե	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
Համագործակցություն																		

35.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	x	x		x	x		X	x	x	x	x	x	x	x	x	x	x
36.	ՀՀ տարածքային և կառավարման և զարգացման նախարարություն	x	x	x	x							x						
37.	ՀՀ ոստիկանություն	x					x	X										
38.	Մարզպետարան	x	x	x	x		x	x			x			x	x			x
39.	ՏԻՄ-եր	x	x	x	x	x		x			x		x	x		x		x
40.	ԱՌՆԱՊ	x	x	x	x			x		x	x	x			x			
41.	Հայկական Կարմիր խաչի ընկերություն	x							x				x		x		x	
42.	ՄԱԿ-ի գործակալություններ	x							x				x		x		x	
43.	Ոչ կառավարական միջազգային կազմակերպություններ	x							x				x		x		x	
44.	Հասարակական կազմակերպություններ	x							x				x		x		x	

5.3. Արտակարգ իրավիճակների գործողությունների կազմակերպում

1. Ազդարարման և բնակչության իրազեկման կազմակերպում

ԱԻ սպառնալիքի և առաջացման դեպքում, ԱՌԿ խորհրդի ազդարարումն իրականացվում է ֆիքսված, բջջային կապի և սուրհանդակների միջոցով, համաձայն ազդարարման, կառավարման ու կապի սխեմայի:

ԱԻ սպառնալիքի, առաջացման դեպքում հաղորդվում է «Հավաք» ազդանշանը, այս դեպքում բոլորը ներկայանում են համայնքապետարան:

Համայնքի բնակչության ազդարարումը իրականացվում է համայնքում առկա շչակի, բարձրախոսի և այլ հնարավոր միջոցներով:

Ազդարարման գործընթացին աջակցում է կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատուն:

2. Իրավիճակի գնահատման կազմակերպում և իրականացում

Աղետի հետևանքով իրավիճակի, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատումն իրականացվում է համայնքային մշտական հանձնաժողովի կողմից, որի կազմն ու գործառույթները հաստատվել են համայնքի ղեկավարի 18-06-2018թ թիվ 1064որոշմամբ:

Հանձնաժողովը բացահայտելով ստեղծված իրավիճակը, տուժածների առկայությունը վնասների չափը հայտ է ներկայացնում մարզային հանձնաժողով, որի կազմն ու աշխատակարգը հաստատվել է Վայոց ձորի մարզպետի 24.01.2012թ թիվ 3 որոշմամբ: Իրավիճակի գնահատումից ելնելով մարզային հանձնաժողովը կարող է հայտ ներկայացնել անմիջապես արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողով:

3. Տարահանման կազմակերպում

Համայնքից արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանում կարող է իրականացվել ուժեղ երկրաշարժի դեպքում:

Տարահանման միջոցառումները կազմակերպում և ղեկավարում է Համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովը՝ որի կազմն ու գործառույթները հաստատվել է համայնքի ղեկավարի 04.04.2018 թիվ 68 Ա կարգադրությամբ:

Մարզային հանձնաժողովը կանոնակարգում է համայնքային տարահանման հանձնաժողովի գործունեությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը սահմանելու մասին» N1180-Ն որոշման:

Համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով ստեղծվել են հետևյալ տարահանման մարմինները.

Համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով

Տարահանման հավաքակայան

Տարահանման հավաքակայանի գործունեությունը համակարգում է համայնքային տարահանման հանձնաժողովը:

4. Բնակչության պատսպարման կազմակերպումը

Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է <<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանով:

Բնակչության պատսպարումը իրականացվում է պաշտպանական կառույցներում՝ նկուղներում, կիսանկուղներում, խորացված տարածքներում՝ համաձայն համայնքի բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկի:

5. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

Ընդանուր տվյալները հավաքվում և վերլուծվում են համայնքի ԱՌԿ խորհրդի կողմից: Վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. աղետի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով բնակչության ներգրավման անհրաժեշտությունը,

դ. փրկարար ուժերի գործողությունների վրա տեղանքի բնույթի, ճանապարհների վիճակի, եղանակային պայմանների, օրվա ժամանակի և այլ գործոնների ազդեցությունը,

ե. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

զ. աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները:

Ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ:

6. Հրդեհաշիջման կազմակերպում

Հրդեհի առաջացման դեպքում Համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծված կամավոր հրշեջ-փրկարարական խումբը անմիջապես կազմակերպում է հրդեհաշիջման աշխատանքներ, միաժամանակ տեղեկությունը փոխանցելով Վայոց ձորի ՄՓՎ ՃԿԿ : Իրականացնում է հրդեհի տարածումը և շինությունների ծխապատումը կանխող միջոցառումներ, կազմակերպում է հրշեջ փրկարարական ստորաբաժանումների դիմավորումը:

Հրշեջ-փրկարարական ստորաբաժանման ժամանումից հետո խմբի ղեկավարը (կամ նրան փոխարինող անձը) պարտավոր է հրդեհաշիջման ղեկավարին տեղեկացնել վառվող օբյեկտի

կառուցվածքային առանձնահատկությունների, հարակից շենքերի, շինությունների, վերաբերյալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են հրդեհի հաջող վերացման համար: Հրդեհաշիջման կազմակերպման աշխատանքներին օժանդակում է համայնքի ԱՌԿ խորհուրդը և Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատուն:

7. Հասարակական կարգի պահպանում

Հասարակական կարգի պահպանությունը ուղղված է արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների հաջող իրականացմանը:

Հասարակական կարգի պահպանությունն իրականացնում է ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչությունը, որի աշխատանքներին օժանդակում է համայնքի ԱՌԿ խորհրդի հասարակական կարգի պահպանման պատասխանատուն:

Վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ժամանակ կատարվում է հասարակական կարգի պահպանում, ավտոտրանսպորտային երթևեկության կարգավորում, տարահանված բնակչության գույքի և նյութական արժեքների պահպանման և պարեկային ծառայության կազմակերպում:

8. Տրանսպորտային ապահովում

Տրանսպորտային ապահովման աշխատանքները կազմակերպում և իրականացնում ԱՌԿ խորհուրդը՝ համայնքում առկա տրանսպորտային միջոցներով: Տրանսպորտային ապահովման համար անհրաժեշտ են հետևյալ տրանսպորտային միջոցները՝

մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ), որոնք նախատեսված են աղետի գոտի փրկարարական կազմավորումներ, համապատասխան մասնագետների խմբեր, անհրաժեշտության դեպքում նաև փոքրածավալ նյութատեխնիկական միջոցներ տեղափոխելու, իսկ աղետի գոտուց բնակչությանը տարահանելու, հիվանդներին ու տուժածներին բուժ.հիմնարկներ տեղափոխելու համար.

բեռնատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են նյութատեխնիկական, ինչպես նաև առաջին անհրաժեշտության միջոցներ (սննդամթերք, հագուստ և հանդերձանք, վրաններ, անկողնային պարագաներ, ջեռուցման սարքեր, դեղամիջոցներ, տնտեսական իրեր և այլն) աղետի գոտի տեղափոխելու համար:

9.Կապի և տեղեկատվության փոխանակման ապահովում

Համայնքի ԱՌԿ խորհուրդը քայլեր է ձեռնարկում Համայնքի ազդարարման համակարգի ստեղծման/արդիականացման ուղղությամբ:

Մշակում, պարբերաբար թարմացնում է ազդարարման և տեղեկատվության հաղորդման սխեմաները ու ցուցակները, մշակում է տարբեր ԱԻ ների ժամանակ բնակչությանը հաղորդվող տեղեկատվության տեսակները և հասցնում բնակչությանը:

Աղետի մասին առաջին հաղորդագրությունը զանգվածային լրատվամիջոցներին տրամադրում է ՀՀ ԱԻՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը: Այնուհետև Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկումներով» պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին:

10. Նյութատեխնիկական ապահովում

Նյութատեխնիկական և սննդամթերային ապահովումը ներառում է աղետի գոտու տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսապահովման համար սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը: Համայնքում այդ աշխատանքները կազմակերպում է համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը՝ դրանցում ընդգրկելով ֆիզիկական անձանց: Համայնքային փրկարարական կազմավորումների կենսապահովումն իրականացնում է համայնքապետարանը:

11. Առաջին օգնության ապահովում

Համայնքը սպասարկվում է «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի, Հերհերի, Գնդեվազի և Կարմրաշենի բուժ կետերի կողմից: Բուժկետերն ապահովված են անձնակազմով առաջին օգնության անհրաժեշտ պարագաներով, որոշ քանակի առաջին անհրաժեշտության դեղորայքով: Առաջին օգնությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով բուժ կետերը ը կարող է համալրվել համայնքի այն բնակիչներով, ովքեր անցել են առաջին օգնության դասընթացներ:

12. Կենսապահովման կազմակերպում

Համայնքի կենսապահովման կազմակերպումը իրականացվում է մշտապես, նպատակ ունենալով ապահովել համայնքի տնտեսության կայունությունը և արագ վերականգնումը աղետից հետո, ինչպես նաև հետաղետային ժամանակահատվածում բնակչության տարրական կենցաղային հարցերի կարգավորում:

Բնակիչները իրենք կարող են հաց արտադրել իրենց հատկացված ալյուրի չափաբաժիններով: Բնակչությանն անհրաժեշտ կաթնամթերքը կարտադրվի ինչպես Եղեգնաձոր քաղաքում և Սալլի գյուղում գործող կաթի վերամշակման ձեռնարկություններում, այնպես էլ բնակչության կողմից՝ ինքնուրույն:

Արտակարգ իրավիճակներում բնակչության կենսապահովման չափաքանակները սահմանված են ՀՀ կառավարության 2010 թվականի 24 հունիսի N 824-Ն որոշմամբ, որոնք արտացոլված են համայնքի կենսապահովման պլանում:

13. Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովում

Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովումը Համայնքի կենսապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է, որի անվտանգության ապահովումը ներառում է կոմունալ-էներգետիկ հանգույցների կայունության բարձրացումը և արագ վերականգնումը, այս նպատակով իրականացվում է խողովակաշարերի վերանորոգում, սյուների ամրացում և այլն:

14. Ինժեներական միջոցառումների ապահովում

ԱՌԿ խորհրդի կողմից կանխարգելիչ միջոցառումների իրականացումը՝ գետի հունի մաքրում, ափափաշտպան գործողություններ, փրկարարական ու հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ կոնստրուկցիաների ամրացում/քանդում և այլն:

Անհրաժեշտության դեպքում ինժեներական տեխնիկայով արագ ստեղծել լրացուցիչ ճանապարհներ, մաքրել և տեղափոխել շինարարական աղբը, ինչպես նաև գործողություններ Համայնքի վերականգնման / վերակառուցման ուղղությամբ:

15. Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպում և հաշվառում

Խոշոր աղետի դեպքում Համայնքի ԱՌԿ խորհուրդը սահմանում է դիակների հետ վարման կարգը, եթե նույնիսկ, փրկարարական աշխատանքները իրականացվում են լիազոր մարմնի կամ օտարերկրյա փրկարարների կողմից՝ Համայնքը ներկայացնում է փրկարարներին դիակների հանձնման կարգը:

Համայնքը ոստիկանության հետ համատեղ իրականացնում է դիակների ճանաչման գործընթացը, որից հետո իրականացնում հուղարկավորության թույլտվության տրամադրում:

Մահացածների ճանաչումը իրականացվում է Համայնքի ուժերով, եթե պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել դատաբժշկական գործողություններ և դիահերձում համայնքի ղեկավարի որոշմամբ իրականացվում է մահացածների հուղարկավորում, և հաշվառում, հուղարկավորման հողհատկացումը իրականացում է համայնքի ղեկավարի կողմից:

Հուղարկավորման համար համայնքը հատկացնում է տարածք և կազմակերպում հուղարկավորման արարողությունը, եթե հարազատները հնարավորություն չունեն ազգագրական գերեզմաններ օգտագործել:

Անհայտ դիակների հուղարկավորման համար հատկացվում է առանձնացված տարածք, հուղարկավորումից առաջ հաշվառելով և պահպանելով հետագա ճանաչման համար առկա պարագաներ (լուսանկարներ, ԴՆԹ նմուշ և այլն):

Անհայտ դիակների հետ գտնված թանկարժեք իրերի պահպանումը կազմակերպում է Համայնքը:

16. Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի անվտանգության կազմակերպում

Աղետի ծագման պահին ընտանիքի անդամները կարող են գտնվել տարբեր վայրերում և իրարից տեղեկություններ չունենան կամ հնարավորություն չունենան իրենց մասին տեղեկացնել, այդ իսկ պատճառով ԱՌԿ խորհուրդը իրազեկում և ուսուցանում է բնակչությանը հետևյալ հարցերով՝ մշտապես իմանալ միմյանց գտնվելու վայրը, յուրաքանչյուր ընտանիք պետք է որոշի իրենց հավաքի վայր, թե համայնքի տարածքում, թե հարևան համայնքներում, բարեկամների տներում:

17. Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում.

Արտակարգ իրավիճակներում կրթության շարունակականության ապահովման նպատակով համագործակցելով մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության և շահագրգիռ մարմինների հետ՝ կրթությունը շարունակվում է ծավալվող վրանային ճամբարներում:

18. Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը

Տարահանված բնակչության կացարաններով ապահովումը իրականացվում է՝

1. Համայնքի չվնասված, անվտանգ բնակելի ֆոնդում,
2. վրաններում կամ արագ կառուցվող կացարաններում:

19. Փոխգործողությունների կազմակերպումը

Փոխգործողությունները Եղեգնաձորի զինվորական կայազորի և ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության հետ կազմակերպվում են հետևյալ կարգով՝

փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են նախապես մշակված ու հաստատված փոխգործողությունների պլանների հիման վրա.

փոխգործողությունների պլանների համաձայն՝ արտակարգ իրավիճակների դեպքում՝ նշված մարմինների ազդարարումն իրականացնում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ը: - Փոխգործողությունների պլաններով նախատեսված ուժերի ազդարարումը, նրանց փրկարարական աշխատանքներին մասնակցությունը և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում են տվյալ մարմինների ղեկավարները:

Համայնքային կամավորական փրկարարական ջոկատների ղեկավարումը փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում կազմակերպում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը, իսկ այդ ուժերի անձնակազմերի ազդարարումը, հավաքը, մուտքն աղետի գոտի և նրանց նյութական ապահովումն իրականացնում են համայնքապետարանը:

20. Փրկարարական և մարդասիրական (նյութական) օգնություն ստանալու նպատակով վնասի և կարիքների գնահատում

Արտակարգ իրավիճակների համայնքային հանձնաժողովը՝ աղետից հետո մինչև առաջին օրվա ավարտը օգնության հայտ է ներկայացնում Արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովին:

Օգնության հայտը ձևակերպվում է գրավոր (հայերեն լեզվով):

Օգնության հայտը ներկայացվում է գործող կապի միջոցներով՝ համակարգիչ (ինտերնետ), հեռախոս, ֆաքս:

Օգնության հայտի ձևակերպման հիմք են հանդիսանում ստեղծված իրավիճակի եզրակացությունները և ճեպընթաց (արագ) գնահատման խմբերի գնահատականները:

Վնասների և կարիքների գնահատումը իրականացվում է հարցաթերթիկներով:

5.4. Համայնքի վերականգնման /վերակառուցման կազմակերպում

ԱԻ արագ և համապատասխան արձագանքման գործողություններից հետո իրականացվում է համայնքի վերականգնման/վերակառուցման աշխատանքներ սեփական ուժերով, միաժամանակ ՀՀ կառավարության կողմից աջակցությամբ:

Վերականգնման միջոցառումների նպատակն է համայնքի արագ վերականգնումն ու կենսագործունեության վերսկսումը, ներառյալ՝ բնակելի ֆոնդը, կեսապահովման համակարգը, զբաղվածությունը, առողջապահությունը, բարեկեցությունը, ուսուցումը:

Վերակառուցման/վերականգնման միջոցառումները պլանավորվում են աղետից առաջ որպես համայնքի կայունության բարձրացման միջոցառումներ, որոնք ուղղված են ենթակառուցվածքների/կոմունալ-էներգետիկ համակարգերի, շինությունների կայունության ապահովմանն ու բարձրացմանը, դրանց արագ վերանորոգումը, շահագործումը և պահպանումը նպատակային ու արդյունավետ դարձնելու համար:

6. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականցման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն,
- ծրագրի ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

Փաստաթղթի մշակման պատասխանատու՝ Շուշանիկ Դանիելյան համայնքի տուրիզմի և տնտեսական զարգացման պատասխանատու
էլեկտրոնային փոստ shushan.danielyan96@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 14 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 82.1.-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 1-ի:

2.Հաստատել Եղեգիս համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 2-ի:

Կողմ՝ 8 Դեմ՝ 3 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Քրիստինա, բացակա

Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 1
Եղեգիս համայնքի ավագանու
17-ը փետրվարի 2023թ. N 14 Ա որոշման

Եկամտային մաս. հազ.դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված /տարեկան /	Կատարողական / տարեկան /	Կատարման տոկոս
Գույքային հարկեր անշարժ գույքից	9800,0	6025,6	61,5
Գույքահարկ փոխադրամիջոցներից	27900,0	24529,9	87,9
Տեղական տուրքեր	1000,0	506,0	50,6
համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալությունից եկամուտներ	7200,0	5960,6	82,8
Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալությունից եկամուտներ	5600,0	6748,0	120,5
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	216374,2	216374,2	100,0
Այլ դոտացիաներ	228228,6	228228,6	100,0
Տեղական վճարներ	12200,0	2171,7	17,8
Այլեկամուտներ /Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	8000,0	8215,2	102,7

Ծախսային մաս	Նախատեսված / տարեկան /	Կատարողական / տարեկան /	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	108000,0	106127,0	98,3
Պարգևատրումներ	0	0	0
Էներգետիկ ծառայություններ	10000,0	9778,9	97,8
Կոմունալ ծառայություններ	11700,0	11680,0	99,8
Կապի ծառայություններ	2000,0	1603,7	80,5
Գործողումների և շրջագայությունների ծախսեր	1818,7	1228,5	67,5
Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	24560,0	5144,9	21,0
Դրամաշնորհներ	24560,0	1432,1	5,8
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	5600,0	3345,0	59,7
Սուբսիդիաներ	29600,0	22749,0	76,9
Այլ ծախսեր	1600,0	1476,3	92,3
Շենքերի և շինություններ կապիտալ	327952,1	314600,5	96,0

վերանորոգում, շինարարություն			
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	14600,7	7951,0	54,5
Նյութեր	16020,0	5159,8	32,2

Համայնքի ղեկավար ..... Արթուր Ստեփանյան

Հավելված 2

Եղեգիս համայնքի ավագանու

17-ը փետրվար 2023թ. N 14 Ա որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023

Հունվար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ 4
2022թ. 1-ին եռամսյակում կատարված աշխատանքները 4
2022թ. 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքները 4
2022թ. 3-րդ եռամսյակում կատարված աշխատանքները 6
2022թ. 4-րդ եռամսյակում կատարված աշխատանքները 6
ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 7
ԲԱՂԱԴՐԻՉ 2 ԾՐԱԳԻՐ 8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2022թ-ին Եղեգիս համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2017-2022թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2022թ. տարեկան աշխատանքային պլանի, հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

2022-ի համար նախատեսվել էր իրականացնել՝

1. Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողամասերի գնում՝ մանկապարտեզի կառուցման նպատակով:
2. Ոռոգման խողովակաշարի կառուցում՝ Եղեգիս համայնքի Քարագլուխ, Սալլի, Հորս, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորբատեղ, Արտաբույնք, Շատին, Վարդահովիտ բնակավայրերում:
3. Արտաքին էլեկտրալուսավորության իրականացում՝ Եղեգիս համայնքի Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորս, Հերմոն, Քարագլուխ բնակավայրերում:
4. Խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում, ՕԿՋ-ի վերանորոգում՝ Գողթանիկ, Եղեգիս, Վարդահովիտ, Քարագլուխ, Շատին, Թառաթումբ բնակավայրերում:
5. Համայնքի 9 բնակավայրերում Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում:

Տնտեսական և սոցիալական զարգացման ուղված այլ ծրագրեր:

Հաշվետվությունը բաղկացած է ըստ եռամսյակներ կատարված աշխատանքներից և համայնքի կապիտալ ձեռքբերումներից 2022 թվականի ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են զգալի արդյունքներ, ըստ ոլորտների և ուղղությունների:

Համայնքի Շատին, Վարդահովիտ, Սալլի, Աղնջաձոր, Քարագլուխ, Թառաթումբ, Գողթանիկ, Հերմոն, Հորս, Արտաբույնք, Հորբատեղ, Եղեգիս բնակավայրերում ամեն շաբաթ կատարվել են սանիտարական մաքրման և աղբահանման աշխատանքներ:

2022թ. 1-ին եռամսյակում կատարված աշխատանքները

1. Ձնմաքրման աշխատանքներ Թառաթումբ, Աղնջաձոր, Հորբատեղ, Հորս, Սալլի, Քարագլուխ բնակավայրերում:
2. Շատին բնակավայրի 5-րդ փողոցի փոսալցման աշխատանքներ:

2022թ. 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

1. Կատարվել է Քարագլուխ բնակավայրում հանդամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:
2. Կատարվել է Հորս բնակավայրում մակատեղիների մաքրման և ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:
3. Կատարվել է Քարագլուխ բնակավայրում "Սալլիի վազեր" կոչվող հողամաս տանող ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
4. Կատարվել է Աղնջաձոր բնակավայրում "Կալասեր" և "Ալուձոր" կոչվող դաշտամիջյան ճանապարհների մաքրման աշխատանքներ:
5. Կատարվել է Վարդահովիտ բնակավայրում արոտներ տանող ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:
6. Կատարվել է Վարդահովիտ բնակավայրում ոռոգման առվի փորման աշխատանքներ:
7. Կատարվել է Եղեգիս բնակավայրում ոռոգման առվի փորման աշխատանքներ:
8. Կատարվել է Շատին բնակավայրում ոռոգման առվի փորման աշխատանքներ:
9. Կատարվել է Աղնջաձոր բնակավայրում "Ձավար գյուղ" կոչվող տարածքից դեպի լիճ տանող ճանապարհի բարեկարգման աշխատաններ:

10. Կատարվել է Շատին բնակավայրում "Շատիվանք" տանող ճանապարհի բարեկարգման աշխատաններ:

11. Կատարվել է Հերմոն և Գողթանիկ բնակավայրերի ճանապարհների բարեկարգման աշխատաններ:

12. Կատարվել է ջրագծի վերանորոգում Սալլի- Շատին բնակավայրերում:

13. Կատարվել է Շատին բնակավայրում ոռոգման առվի մաքրում 500մ:

14. Կատարվել է Սալլի բնակավայրում սեպտիկաի փորման աշխատանքներ:

15. Կատարվել է Սալլի բնակավայրի ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

16. Կատարվել է Հերմոն - Գողթանիկ հատվածում խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքներ:

17. Կատարվել է Հորս բնակավայրում ոռոգում առուների վերանորոգման աշխատանքներ:

18. Կատարվել է Արտաբույնք- Սմբատաբերտ- Ցախած քար և Հորբատեղ բնակավայրի հանդամասի ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

19. Կատարվել է Վարդահովիտ-Սևաժայռ ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

20. Կատարվել է Աղնջաձոր բնակավայրի խմելու ջրի վերանորոգման աշխատանքներ:

21. Կատարվել է բն. Հերմոն-Գողթանիկ ճամապարհների շեբենապատում:

22. Կատարվել է բն. Հերմոն ոռոգման առվի նորոգում:

23. Կատարվել է բն. Եղեգիս ոռոգման ջրի ակունքի վերանորոգում:

24. Կատարվել է բն. Շատին հանդամիջյան ճանապարհի վերանորոգում:

25. Կատարվել է բն. Հորբատեղ ներբնակավայրային ճանապարհի նորոգում:

26. Կատարվել է բն. Եղեգիս հանդամիջյան ճանապարհի վերանորոգում:

27. Կատարվել է բն. Գողթանիկ ներբնակավայրային ճանապարհային նորոգում:

28. Կատարվել է բն. Գողթանիկ ոռոգման առվի նորոգում:

29. Կատարվել է բն. Քարագլուխ հանդամիջյան ճանապարհների նորոգում:

30. Կատարվել է բն. Սալլի դաշտամիջյան ճանապարհների նորոգում:

31. Կատարվել է բն. Հորբատեղ սար տանող ճանապարհի նորոգում:

32. Կատարվել է բն. Աղնջաձոր սար տանող ճանապարհի նորոգում:

33. Կատարվել է բն. Թառաթումբ ճանապարհների շեբենապատում:

2022թ. 3-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

1. Կատարվել է Սալլի բնակավայրի փողոցների բարեկարգման աշխատանքներ:
2. Կատարվել է Սալլի բնակավայրի ջրագծի ապամոնտաժման աշխատանքներ:
3. Կատարվել է Արտաբույնք բնակավայրի դպրոցի կոյուղագծի նորոգման աշխատանքներ:
4. Կատարվել է Թառաթումբ բնակավայրում «Խնձորանոց» տանող ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
5. Կատարվել է Շատին բնակավայրի «Ցած դեմեր» կոչվող տարածքում ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
6. Կատարվել է Արտաբույնք բնակավայրում ջրագծի փորման աշխատանքներ:
7. Կատարվել է Հերմոն բնակավայրում վթարված ջրագծի նորոգման աշխատանքներ:
8. Կատարվել է Շատին բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկրորդային ասֆալտով հարթեցման աշխատանքներ:
9. Կատարվել է Թառաթումբ բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկրորդային ասֆալտով հարթեցման աշխատանքներ:
10. Կատարվել է Եղեգիս բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների երկրորդային ասֆալտով հարթեցման աշխատանքներ:

2022թ. 4-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

1. Կատարվել է Շատին, Սալլի, Եղեգիս, Հորս, Քարագլուխ, Թառաթումբ և Վարդահովիտ բնակավայրերում ներբնակավայրային ճանապարհների երկրորդային ասֆալտով հարթեցման աշխատանքներ:
2. Կատարվել է Շատին, Սալլի, Եղեգիս, Հորս, Քարագլուխ, Թառաթումբ, Վարդահովիտ բնակավայրերում հիմնական փողոցների, գերեզմաններ տանող ճանապարհների և հասարակական օբյեկտների ճանապարհների բարեկարգման աշխատամքներ:
3. Կատարվել է Սալլի բնակավայրի «Արիլի» և գետաբերանի պտղատու այգիների ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

4. Կատարվել է Արտաբույնք բնակավայրում 300 մ ջրագծի փորում և հետլիցքի աշխատանքներ:

5. Կատարվել է Հորբատեղ բնակավայրում ջրահեռացման առուների փորման և գերեզմանների հատվածում ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:

6. Կատարվել է Արտաբույնք բնակավայրում վթարված ջրագծի նորոգման աշխատանքներ:

7. Կատարվել է Թառաթումբ բնակավայրում գերեզմանների վերևի հատվածում պաշտպանիչ ջրահեռացման առվի փորման աշխատանքներ:

8. Կատարվել է Աղնջաձոր բնակավայրում խմելու ջրի վնասված հատվածի վերանորոգման աշխատանքներ:

9. Կատարվել է Գողթանիկ բնակավայրում 100 մ խմելու ջրագծի փորման աշխատանքներ:

10. Կատարվել է Վարդահովիտ բնակավայրում ոռոգման ցանցի նորոգման և փորման աշխատանքներ:

11. Կատարվել է Աղնջաձոր բնակավայրում պատմական հուշարձան համարվող հին կամուրջի կողապատի հետլիցքի և տարածքում նորոգման աշխատանքներ:

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

1. Ավարտվել է Շատին բնակավայրում հողատարածքի գնման աշխատանքները:

2. Ավարտվել են Եղեգիս համայնքի Շատին, Հորս, Քարագլուխ, Հերմոն, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները՝

- Շատին բնակավայրում լուսավորվել է /3180մ/ հենասյուների քանակը՝ 106 հատ:
- Աղնջաձոր բնակավայրում լուսավորվել է /510մ/ հենասյուների քանակը՝ 17 հատ:
- Թառաթումբ բնակավայրում լուսավորվել է /1800 մ/ հենասյուների քանակը՝ 60 հատ:
- Հորս բնակավայրում լուսավորվել է /420մ/ հենասյուների քանակը՝ 14 հատ:
- Հերմոն բնակավայրում լուսավորվել է /390 մ/ հենասյուների քանակը՝ 13 հատ:

- Քարագլուխ բնակավայրում լուսավորվել է /360 մ/ հենասյուների քանակը՝ 12 հատ:

3. Ավարտվել են Եղեգիս համայնքի Եղեգիս, Գողթանիկ, Քարագլուխ, Շատին և Թառաթումբ բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքները՝

- Գողթանիկ 92մ 63մմ պոլիէթիլենային խողովակ և 2 նոր կապտաժ,
- Եղեգիս 490մ 110մմ պոլիէթիլենային խողովակ,
- Քարագլուխ 170մ վերգետնյա ջրագիծ և Քարագլուխ ՕԿՋ-ի վերակառուցում,
- Թառաթումբ 160մ 110մմ պոլիէթիլենային խողովակ,
- Շատին 40մ 102մմ պողպատե խողովակ:

4. Ավարտվել են Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հորս, Թառաթումբ, Աղնջաձոր, Արտաբունք, Հորբատեղ և Սալլի բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգման աշխատանքները՝

- Քարագլուխ բնակավայր 370մ ոռոգման առվի կառուցում,
- Սալլի բնակավայր 345մ ոռոգման առվի կառուցում,
- Հորս բնակավայր 250մ ոռոգման առվի կառուցում,
- Աղնջաձոր բնակավայր 370մ ոռոգման առվի կառուցում,
- Թառաթումբ բնակավայր 350մ ոռոգման առվի կառուցում,
- Հորբատեղ բնակավայր250մ ոռոգման առվի կառուցում,
- Արտաբույնք բնակավայր 330մ ոռոգման առվի կառուցում և 50մ վերանորոգում,
- Շատին բնակավայր 514մ ոռոգման առվի կառուցում:

ԲԱՂԱԴՐԻՉ 2 ԾՐԱԳԻՐ

ՀՏՀԶ-ի կողմից իրականացվող ՍՆՏՀ Ծրագիրը, որի արդյունքում արևային ֆոտովոլտային կայաններ կտեղադրվեն և կհոգան հոսանքների ծախսերը՝

1. Արտաբույքի մշակույթի տան, վարչական շենքի, փողոցային լուսավորության,
2. Հորբատեղի վարչական շենքի, փողոցային լուսավորության,
3. Հերմոնի վարչական շենքի, փողոցային լուսավորության,
4. Վարդահովիտի վարչական շենքի, մշակույթի տան, փողոցային լուսավորության,
5. Գողթանիկի վարչական շենքի, փողոցային լուսավորության,

6. Հորսի վարչական շենքի, փողոցային լուսավորության,
7. Սալլիի վարչական շենքի, փողոցային լուսավորության
8. Աղնջաձոր ակումբ, փողոցային լուսավորության,
9. Թառաթումբի վարչական շենքի:

Կազմող՝ համայնքի տուրիզմի և տնտեսական զարգացման պատասխանատու՝
Շուշանիկ Դանիելյան
էլեկտրոնային փոստ *shushan.danielyan96@mail.ru*

Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 15 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/09/2022Թ. ԹԻՎ 105Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾԻ 11-ՐԴ, 15-ՐԴ ԿԵՏԵՐԸ ԵՎ 15/07/2022Թ. ԹԻՎ 93Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասով, ***ավագանին որոշում է՝***

1.Հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 10/11/2022թ. N01/15.1/7281-2022 գրությունը՝ անվավեր ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 08-ը սեպտեմբերի 2022 թվականի «Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից աճուրդային կարգով օտարելու մասին» թիվ 105 Ա որոշման կից հավելվածի 11-րդ և 15-րդ կետերը:

2.Հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 11/01/2023թ. N01/13/0231-2023 գրությունը՝ անվավեր ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու «Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալությամբ տրամադրելու մասին» 15-ը հուլիսի 2022 թվականի թիվ 93 Ա որոշումը:

Կողմ՝ 8 Դեմ՝ 3 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Ձոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Բորիսլավա, բացակա

Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17-ը փետրվարի 2023 թվականի N 16 Ա

ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմանների «Սևաժայռ» կոչվող տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 12 հա արոտավայր և 40 հա խոտհարք հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Արտյոմ Վիգենի Վարդանյանին:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրեր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ՝ 11 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Բաբայան Վահե
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Վաչագան, բացակա
Միքայելյան Գեղամ, բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 17 Ա

ՍԱԼԼԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԵՎ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/09/2022Թ. ԹԻՎ 103Ա ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 12-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Սալլի գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Սալլի գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արմեն Ավետիկի Հայրապետյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսք հողատեսքից /0,41495հա մակերեսով, 10-038-0116-0033 կադաստրային ծածկագրով/ առանձնացված 0,3հա /որից՝ 0,188հա վարելահող և 0,112հա այլ հողատեսք/ հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

3.ՈՒԺը կորցրած ճանաչել 08/09/2022 թվականի «Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 103Ա որոշման 3-րդ կետը:

Կողմ՝ 11 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Քրիստինա, բացակա
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 18 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/12/2022Թ. ԹԻՎ 136Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով,

ավագանին որոշում է՝

Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբեր 8-ի «Զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Եղեգիս համայնքի ավագանու 31-ը օգոստոսի 2018 թվականի թիվ 57Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 136Ա որոշման կից հավելվածում 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝

«7.Արմեն Հակոբյան, առաջին կարգի մասնագետ»:

Կողմ՝ 11 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան

Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Քրիստինա, բացակա
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17-ը փետրվարի 2023 թվականի N 19 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ավագանին որոշում է՝

Եղեգիս համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օր սահմանել 2023 թվականի մարտի 24-ը, ժամը 15:00-ին:

Կողմ՝ 11 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան, բացակա
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Մամիկոն
Վարդանյան Վարդան
Հարությունյան Կարեն, բացակա
Ստեփանյան Սաշա, բացակա
Միքայելյան Քրիստինա, բացակա
Բաբայան Վահե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**